


1916

13

ՀԱՄԵՐԱՅՆԱԿԱՆ
ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
(1914—1915)



1910

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈՎԱՐԱՆ

ՊՈԽՔ-ՕՆ

1888/1

ԲԱԴԱՎԱՐ 142038

568

329.14(7.895)


2 - 20

ԱՐԵՎԱՏ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ներկայ սլրօշիւրով կներկայացնենք
ամերիկահայութեան զանազան հոսանք-
ներու համեւրոպական պատերազմի բը-
ռընկումէն մինչեւ օրս տուած համերաշ-
խական քայլերու պատմութիւնը։ Մեր
աշխատութիւնը հիմնւած ըլլալով միմի-
այն փաստաթուղթերու եւ անհերքելի վը-
կայութիւններու վրա՝ ընթերցողին կու-
տայ յիշեալ ժամանակամիջոցին մէջ իւ-
րաքանչիւր հոսանքի ցոյց տւած ոգւոյն և
ողղութեան ճշգրիտ պատկերը։

A-1888/1



I

Համեւրոպական աշխարհաւեր ներկայ
բաթասթրօֆին բռնկումէն վերջ, երբ
մանաւանդ Թուրքիա ալ ինքզինքը նետեց
անոր յործանքին մէջ, կովկասահայու-
թիւնը եւ իր ծոցը զանւած հաղարաւոր
թրքահայ տարագիրները, որ երկարաձիգ
ու տառապեալ անցեալի մը ընթացքին
հսկայական զոհողութիւններու ենթարկ-
ւած էին հայկական ազատագրութեան ի-
րագործման համար, հրապարակ իջան
Դաշնակիցներու կողքին եւ իրենց Փիդի-
քական ու նիւթական ուժերը տրամադրե-
ցին անոնց, հաւատալով որ ներկայ պա-
տերազմը կվերջանայ անոնց յաղթանակով
և այդ յաղթանակը կըլլայ նաեւ բոլոր
փոքր ազգութիւններու, որոնց չարքին
մէջ եւ հայերու արդար զատին յաղթա-
նակը:

Կովկասահայ այս շարժումը շուտով իր
արձադանողը զտաւ մէր զաղութին մէջ ալ
և 1914-ի նոյեմբերի սկիզբները չորս քա-
ռաքական կաղմակերպութիւններու ներ-
կայացուցիչները իրարու քով դալով կազ-
մեցին «Միջկուսակցային Յանձնախումբ»

անունով մարմին մը՝ բոսկին պահանջած
քայլերը առնելու համար :

«Միջկուսակցային Յանձնախումբ»ը իր
խորհրդակցութիւններու սկզբնաւորու-
թեան մէջ, տարւած տիրող ընդհանուր ո-
գեւորութենէն, հասարակութեան միտքը
հանդարտեցնելու համար, երկու հաղճեղ
կոչեր հրատարակելէ վերջ՝ ինքոյնքը գր-
տաւ հետեւեալ գործնական դժւարութիւն
ներու առջեւ, որոնց պէտք էր գոհացու-
ցիչ լուծում մը տալ, հրապարակային
հանդանակութիւններու սկսելէ առաջ։
Այդ դժւարութիւններն էին, — Ի՞նչ նպա-
տակի համար պիտի գործածւի դրամը և
ի՞նչ եղանակով ու համեմատութիւնով։

Դրամի գործածութեան նպատակի շուրջ
դժւար չեղաւ ընդհանուր համաձայնու-
թիւն մը գոյացնել։ Միաձայնութեամբ
ընդունեցաւ հետեւեալ բանաձեւը.

«Միջկուսակցական Յանձնախմբի նը-
պատակը պիտի ըլլայ աջակցիլ հայ ազա-
տագրութեան համար ներկայ պատերազ-
մին առթիւ ըլլալիք համազգային ջանքե-
րուն— 1. Օգնել այժմ իսկ երկրի մէջ կըո-
ւող խմբերուն. 2. Զինեալ շարժում մը
առաջ բերել, երբ կարելի ըլլայ Դաշնա-
կից պետութեանց հաւանութիւնն ու աջակ

ցուրիւմն ստանալ . 3 . Դիւանագիտական
հետապնդումներ կատարել :

Այսպէս դրամի գործածութեան նպա-
տակը որոշելէ վերջ՝ կարզը եկաւ որոշե-
լու թէ Հանգանակութիւններէն գոյանտ-
իք դումարը ի՞նչ համեմատութիւնով պի-
տի յատկացւի վերոյիշեալ նպատակնե-
րուն և ի՞նչ ճամբաներով : «Միջկուսակ-
ցային Յանձխմբօի Հ . Յ . Դաշնակցու-
թեան ներկայացուցիչները հարց բերին՝
թէ քանի որ մեր կովկասահայ Եղբայրնե-
րը արդէն սահմանը անցած են և կղոհա-
րերեն իրենց կեանքերը հայ ազատազրու-
թեան համար և քանի որ այս յանձնա-
խմբի առաջին և դլխաւոր նպատակն է
(ահս վերը) օդնել կուռզ խմբերու , յանձ-
նախումբը իր Հանգանակելիք դը-
րամներուն քանի՝ տոկոսը պատ-
րաստ է տրամադրել անոնց : «Միջկու-
սակցային Յանձնախումբօը Երկար վիճա-
րանութիւններէ վերջ՝ բարեհաճեցաւ ո-
րոշում անցնել , որ առայժմ կրնայ տրա-
մադրել միայն 100ին 25ը , խոստանալով
որ ապագային եթէ խմբերու մեծու-
թեան եւ զործունէութեան մասին նոր տե-
ղեկութիւններ գան , ոլիտի բարձրացնէ
յիշեալ տոկոսը :

Անցան շարաթներ, յանձնախմբին և կան միանալու Առաջնորդարանի ներկայացուցիչներն ալ եւ ան վերամկրտւելով կոչւեցաւ «Ազգային Պաշտպանութեան Ամերիկայի Յանձնախումբ»։ Սոյն շարաթներու ընթացքին կովկասեան թերթերը ինչպէս նաեւ մեր սեփական հեռագիրներն ու նամակները նորանոր ճոխ տեղեկութիւններ բերին մեզի հայ կամաւոր գընդերու գործունէութեան չափին եւ կարեւորութեան մասին։ Մեզի հետ բոլորն ալ տեղեկացան որ կուող կամաւորներու թիւը աւելի քան երեք հազար է, որ Ազգային Կեդրոնական Բիւրօն ամսական 30,000 տօլարի ծախք մը ունի, որ կամաւոր երթալու տրամադրելիներու թիւը անհամար է, բայց միջոցներ կողակսին։

Յիշեալ փաստերու վրա հիմնւած՝ մենք առաջարկ տարինք որ հանգանակւելիք գումարներուն գոնէ կէսը յատկացւի կովկասին, քանի որ այժմ կոիւը հոն է որ կը մզւի եւ քանի որ մեզի շարունակ կոչեր կուզան դրամական օդնութիւն փութացընելու։ Պատասխանւեցաւ մեզի «Ազգային Պաշտպանութեան Ամերիկայի Յանձնախմբ»-ի մեծամասնութեան կողմէ, որ 100ին 25ը կրտէ կովկասին։ Հարցւեցաւ,

բնականաբար , որ յանձնախռումը արդեօք
ո՞ր օրւան համար կտահէ մնացած 100ին
հօր : Պատասխանւեցաւ որ իրենք իրենց
ժամանակին մէջ ուրիշ ծրագիրներ ունին : Մենք
չեշտեցինք թէ մենք երբէք հակառակ չենք
հայ ազատազրութեան համար նոր քայլեր
ալ առնելու ուրիշ վայրերու մէջ , եթէ
հնարաւոր ըլլայ . բայց քանի որ գործու-
նէութեան վայրը այժմ կովկասն է , ին-
չո՞ւ հանգանակութեան գոնէ կէսը չյառ-
կացնել հոն : Մի՞թէ բաւական չէ դրամին
մնացած կէսը մեր երեւակայական ծրա-
գիրներուն համար , որոնք գուցէ մինչեւ
վերջն ալ դատապարտւած ըլլան միայն
երեւակայութիւն մնալու : Դիտել տրւե-
ցաւ , դարձեալ , որ եթէ օր մը հնարաւոր
ըլլայ այդ տեսակ շարժում մը ստեղծելու
և մեր ձեռքը եղած գումարները անբա-
ւական ըլլան , մենք կրկին կրնանք դիմել
ամերիկահայութեան , որ վստահաբար
պիտի տայ նոյն խանդավառութիւնով ո-
րով հիմա պատրաստ է օժանդակել կով-
կասի սահմանին վրա կուող իր եղբայր-
ներուն : Բացի այդ , կըսէինք մենք , ին-
չո՞ւ չհաւատալ , որ նոյն կովկասը , որ
այսօր միլիօններ կարամազրէ հայ ազա-
տազրութեան համար , վաղը նոյնը պիտի

չընէ , հոգ չէ թէ որ կմզւի աղա-
տաղրութեան կոխւը : Մեր ինչուները մը-
նացին անպատասխանի : Զայներու մե-
ծամասնութիւնով որոշեցին , որ 100ին 25
-էն աւելի չյատկացւի Կովկասին :

Այս չէր ամէնը . կար եւ հասցէի ինդի-
ւը : Կովկաս զրկւելիք զուժարը որո՞ւ ,
ի՞նչ հասցէի պէտք էր զրկել : Յանձնա-
խմբի Դաշնակցական ներկայացուցիչ-
ները առաջարկեցին , որ զրամը զրկւի Ազ-
գային Բիւրօին : Ըստեցաւ որ Ազգային
Բիւրօին ազգային մարմին մը ըլլալը
հաստատող բաւականաշափ փաստեր չը-
կան : Մենք դարձեալ ցոյց տւինք կովկա-
սահայ թերթերը եւ մեր տեղեկութիւննե-
րը , որոնք կապացուցանէին բացորոշ կեր-
ոլով , որ Ազգային Բիւրօն միակ կեղրոնա-
կան մարմինն է , որ վաւերացւած է Աւա-
րողիկոսի կոնդակով , որուն կողարկւին
հարիւր հազարներ , Կովկասի եւ Ռուսիոյ
ամէն կողմէրէն , որ իրրեւ հեղինակաւոր
մարմին տուրքեր կնշանակէ քաղաքներու
յրա եւայլն : Այս փաստերը բաւական չը-
նկատւեցան մեր Թովմասներուն համար :
Որոշում կայացաւ եւ հեռազրւեցաւ յանձ-
նախմբին կողմէ Թիֆլիսի առաջնորդ
Մեսրոս արքեպիսկոպոսին , որ խորհր-

դակցելով Ա. Խատիսեանի և «Մշակ»ի խմբագրին հետ՝ հեռագրէ թէ՝ ազգային կեղրոնական մարմին մը կա՞յ: Մենք այդ որոշումին ալ համաձայնեցանք:

Հեռագրին պատասխանը, սակայն, քիչ մը ուշացաւ եւ մեր պարոնները Ենթագրելով թէ այլեւս բնաւ պատասխան չդար, կոթնելով իրենց ձայներու մեծամասնութեան վրա՝ որոշում տւին որ դրամը դրկի կաթողիկոսին, որպէսզի անիկա խրաֆանչիւր խմբակցութենէ մէյ մէկ ներկայացուցիչ կանչելով՝ զրամը իր նըստակին յատկացնէ անոնց որոշման համաձայն: Մենք կրկին եւ կրկին դիտել տւինք, որ այդպիսի որոշում մը ոչ միայն նախատինք մըն է Ազգ. Բիւրօին, որուն կովկասահայութիւնը հարիւր հաղարներով կվստահի, այլ եւ հակահամերաշխական քայլ մըն է, քանի որ կստեղծէ արդէն գտնածին քով ուրիշ մարմին մըն ալ, այդպէսով պառակտելով ուժերը: Լսելի չեղանք:

Ծատ չանցած սպասւած հեռագիրը եկաւ, որ պարզ կերպով կրսէր թէ Ազգային Բիւրօն կվայելէ կաթողիկոսի հովանաւորութիւնը եւ թէ անոր կմասնակցին բոլոր խմբակցութիւնները: Հիմնած սոյն

Հեռագրին եւ մեր նախապէս թւած փառ-
տերուն վրա՝ մենք կրկին պահանջ զրինք,
որ զրամը զրկուի Ազգային Բիւրօին։ Բայց
կրկին անլսելի մնացինք։ Այլեւս պարզ
էր, որ մարդիկ փաստ չէր որ կփնտռէին,
այլ կուղէին ամէն գնով մնալ իրենց ան-
արամարանական եւ ազդավիճաս որոշում-
ներուն վրա, որոնք բղխած էին մեծամա-
ւամբ յետին մտքերէ և կուսակցական
շահերու նկատառութենէն։

Իրերու այս վիճակին մէջ, յանձնախմբի
Դաշնակցական անդամները այլեւս յոդ-
նած ցուցազրւած մտայնութենէն՝ խըն-
ուիրը կյանձնեն իրենց վերին մարմնին,
որ իր կարգին հետեւեալ ընդարձակ պատ-
ճառարանւած նամակով անդամ մը եւս
կներկայացնէ իր համեստ եւ արդար պա-
հանջները յանձնախմբին։

Թիւ 22

Յունիար 8, 1915, Պուրօն

ԱԶԴԱՑԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՅԱՆՉՆԱԽՄԲԻՆ

Յարգելի հայրենակիցներ,

Համազգային վտանգի ու երկունքի այս
պատճական օրերուն ամէն հայու բաղ-
ձանքն ու պահանջն էր որ ազդին քաղաքա-
կան կազմակերպութիւնները, ինչպէս եւ

ոյլ խմբակցութիւններ, իրարհասկացութեան մը դան, գործակցութեան յատակագիծ մը պատրաստեն, որովէսզի ո՛չ միայն առնւելիք քայլերը իրար չխաչաձեւեն, այլեւ արդիւնքը ըլլայ պատարերու պատկառելի, թէ՝ նիւթաղէս եւ թէ՝ բարոյապէս:

Ահա այս արդար պահանջին ընդառաջ երթալու համար էր որ հայ քաղաքական կազմակերպութիւններու ամերիկահայ հատւածները իրարու միացան, կազմեցին Միջկուսակցային Յանձնախումը մը (ուռուն վերջերս եկան միանալ և Առաջնորդարանի ներկայացուցիչները) և սկսան աշակել գործակցութեան որոշ ծրագիր:

Ամերիկահայութեան այս քայլերը, սակայն, որքան ալ խելացի եւ բողէի պահանջին համաձատասխան, մեծ արժէք մը չպիտի ներկայացնէին, եթէ համանըման քայլեր առնւած չըլլային մեր ներկայ գործունէութեան կեղրոնավայրին՝ Կովկասի մէջ:

Կովկասահայութիւնը չարժեցաւ աւելի կանուխ քան մենք: Դեռ ուռութրքական ողատերազմը սկսելէ առաջ մեր կովկասահայ ազգակիցները գործի ձեռնարկեցին և սոսանորդարանի կից կազմեցին կեղրու-

նական մարմին մը , Ազգային Բիւրօ անունով , որ այժմ կղեկավարէ կամառոր զընդերու զինման , պարենսորման , և այլ զործերը :

Մեր ստացած հեռագրական եւ այլ հաւատի տեղեկութիւններու համաձայն՝ Ազգային Բիւրօն միակ ազգային բնոյթ ունեցող մարմինն է , որ կվայելէ հառանութիւնն ու աջակցութիւնը կաթողիկոսին եւ ոռոսական ընդհանուր սպայակոյտին :

Դարձեալ՝ կովկասահայ թերթերու տեղեկութիւններէն պարզ կերեւի որ կամաւորներու զործին յատկացւելու նպատակով՝ հաւաքւած բոլոր գումարները ուղղակի կամ անուղղակի ճամբաններով կմտնեն Բիւրօի գանձը :

Բիւրօն իրը զեկավար ընդհանուր զործին պաշտօնական դիմումներ կկատարէ և օգնութեան կոչ կհրատարակէ Ազգային Բիւրօ անունով և այդ կոչերը լոյս կտեսնեն նոյնիսկ այն թերթերու մէջ , որոնք զործի սկզբնական քայլերուն մէջ կժըխտէին Բիւրօի ազգային հանգամանքը :

Ազգային Բիւրօի իրաւասութեան սահմանն այնչափ ընդարձակ է որ , ինչպէս կը սեղեկանանք կովկասահայ և ոռու թեր-

թերու հազորդած տեղեկութիւններէն, ան սկսած է տուրք նշանակել զանազան քաղաքներու վրա : Այսպէս՝ օրինակ .— Նախիջեւան 100,000 բուրլի (որ խոստացած է 200,000 բուրլիի բարձրացնել), Աստրախան 32,000, իսկ Մոսկվա, նախ քան տուրքերու այս նշանակումը, արդէն քառորդ միլիոն դրկած էր Ազգային Բիւրօին, եւայլն :

Ազգային Բիւրօի գոյութեան եւ իրաւասութեան մասին ուղղակի տեղեկութիւն ստանալու համար՝ Միջկուսակցային Յանձնախումբը որոշեց զրել Թիֆլիսի առաջնորդ՝ Մեսրոպ արքեպիսոփին, որպէս զի, խորհրդակցելով քաղաքապետ Ա. Խատիսեանի եւ «Մշակ»ի խմբագրի հետ, մեզ հեռագրէ Բիւրօի կազմի եւ դոյութեան մասին :

Ահա պատասխանը յանձնախմբի տւած հեռագրին .—

«Թիֆլիսի Հայ Ազգային Կեղրոնական Բիւրօն կզործէ կաթողիկոսի Հաւանութեամբ . կմասնակցին բոլոր խմբակցութիւնները . պատւակալ նախագահն եմ ես . նախագահը Յարութիւննեան . փոխնախագահը՝ Խատիսեան : Բիւրօն կազմակերպած է չորս

իսումք, որոնք կունենան վայլուն յա-
չողութիւններ։ Բիւրօն պէտք ունի
մեծ զումարներու։ Կիսնդրենք ամե-
րիկահայ հայրենակիցներէն օգնել
մեզ, որտեմ զրկելով պանքայի միջո-
ցով։

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊ.

Աչքի առաջ ունենալով այս վաստերը՝
մենք իրաւունք ունեինք ակնկալելու որ
յանձնախումբը, որու զլիսաւոր նպատակն
է օգնել երկրի մէջ կուող հայ խմբե-
րուն, եւ որ հայ կամաւորներու զործու-
նէութեան լուրն ստանալէն առաջ իսկ ո-
րոշեց հանդանակելիք զումարին 100ին
25ը անմիջապէս զրկել Կովկաս, առանց
այլեւայլի ու յապաղման պիտի որոշէր
տեկի մեծ տոկոս մը — եթէ ոչ ամբողջը —
զրկել զործին միակ վայրը։

Ցաւ է մեզ տեսնել սակայն, որ յանձնա-
խումբը տւելի քան երկու ամիսներ ան-
ցուց առանց զործ տեսնելու, եւ տակաւին
այս վայրկեանին ալ, երբ զործելու եւ
երկրի կուող կամաւորներու օգնու-
թեան հասնելու պահանջը աւելի քան հը-
րամայական է, ունէ արամազրութիւն
ցոյց չտար խօսքէն զործի անցնելով իր
նպատակը հետապնդելու։

Արդ նկատի ունենալով որ,

1— Կովկասիան սահմանին վրա կամաւորներու գործունէութիւնը իրրեւ արտայայտութիւն ամրողջ հայ ազգի բաղանքին՝ պէտք ունի դրական եւ անմիջական օգնութեան,

2— Միջկուսակցային Յանձնախումբը կազմւած է գլխաւորապէս երկրի կուողներու օժանդակութիւն հասցնելու նրապատակով, ինչպէս ընդունւած է յանձնախմբին առաջին նիստին մէջ,

3— Ազգային Բիւրօֆին կողմէ պաշտօնապէս գիմում եղած է յանձնախմբին փութացնել նիւթական օժանդակութիւն,

4— Յանձնախմբի Երկու ամսու ամուլիւանքը սկսած է արգարացի տրատունջ ասաջացնել գաղութի բոլոր խաւերուն մէջ, հետզհետէ պաղեցնելով դործի սկզբնական քայլերուն մէջ դոյտութիւն ունեցող տաք տրամադրութիւնը,

5— Յանձնախումբը ինք չառնելով դործնական ուևէ քայլ՝ արդելք եղաւ նաև որ կազմակերպութիւնները իրենց անկախ դործունէութեամբ ջանան օգնութիւն հասցրնել դործին,

6— Յանձնախմբի դոյտութիւնը կարդաբանայ միայն երկրի դործունէութեան

օժանդակելով եւ ամբացնելով հոն արդէն
զոյտութիւն ունեցող սրտապնդիչ համե-
րաշխութիւնը ,

Կառաջարկենք ,

1— Անմիջապէս հանդանակութեան ըս-
կրսիլ որոշելով զումարի առնւազն կէսը
զրկել կովկաս , յատկացնելու համար հայ
հողի վրա կռւող հայ կամաւորներու ան-
խըսիր :

2— Դրամը զրկել Ազգային Բիւրօին ,
անկէ դուրս ոեւէ անհատի կամ մարմնի
զրկելու առաջարկ նկատելով ո'չ միայն
անվստահութեան արտայայտութիւն մը
հանդէալ համազգային վստահութիւն վա-
յելող Ազգային Բիւրօին , այլեւ հակա-
համերաշխական քայլ մը ,

3— Հանդանակւելիք զումարին միւս
կէսը պահել , դործածւելու համար երկրի
ուրիշ վայրերու մէջ յեղափոխական շար-
ժում առաջ բերելու : Խսկ եթէ մինչեւ 1915
մարտ ամսուր վերջը կարելի չըլլայ առաջ
բերել այդպիսի շարժում մը , մնացեալ
կէսն ալ զրկել կովկաս , հայ խմբերուն :

Հ . Յ . Դ . Ամերիկայի կեղրոնական
կօմիտէն , որ հակառակ դործի վայրէն
հեռագրով եղած օդնութեան պահանջին ,
համերաշխութեան սիրոյն դադրեցուց

արդէն սկսած իր տարեկան հանգանակային ժողովները, այսօր դարձեալ համեմաշխութեան անունով է որ կներկայացընէ վերոյիշեալները, իբրեւ վերջին եւ նռազադոյն առաջարկներ, որոնց բարի Եղէք պատասխանել ամենառուշը մինչեւ առաջիկայ հինգշարթի (յունիլար 14):

Երկունքի այս օրերուն որքան որ հրամայական էր համախմբել մեր համեստուժերը, պատաւոր կերպով դուրս դալու համար հասարակաց թշնամիին դէմ, նոյն չափ եւ աւելի հրամայական է զգոյշ բլլալ եւ թոյլ չտալ որ համերաշխութիւնը խախտի, ճնշիչ տպաւորութիւն գործելով հասարակութեան վրա եւ վնասելով գործին:

Յարդանքներով

Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵ
(ԿՆԻՔ)

«Ազգ. Պաշտ. Ամերիկահայ Յանձնախումբ»ը կեղր. Կոմիտէի յիշեալ նամակին պատասխանելէ առաջ հրատարակեց շըրջարերական մը եւ սկսաւ անջատ հանգանակութիւններու, այսպէսով խղած յայտարարելով համերաշխութիւնը: Կեղր. Կոմիտէն ալ իր կարգին սկսաւ հանգանակութիւններու իբրև Ազգային Բիւրօի տե

զային մասնաձիւդ եւ Երկու տմուտան ընթացքին հանգանակեց առելի քան հարիւր հազար տօլար, մինչդեռ «Յանձնախումբ»ը, որ կրաղկանար քաղաքական Երեք կուսակցութիւններու և Առաջնորդարանի ներկայացուցիչներէն, կրցաւ հազիւ հազ հանգանակել քառասուն հազար տօլարի չափ գումար մը:

II

Ամիսներու գործունէութենէ յետոյ, Երբ Հայ ժողովուրդը զանազան կաղմակերպւած մարմիններու միջոցով թէ Կովկասի եւ թէ արտասահմանի մէջ մեծ աշակցութիւն էր ցոյց տւած տառապող Հայ ժողովրդին եւ անոր կուող որդիներուն, օր մը մամուլին մէջ յայտարարւեցաւ, օր Պօղոս Նուպար փաշան Եղիպատոսի մէջ Հիմնած էր «Ազգային Շահերու Պաշտպանութեան Յանձնախումբ» անունը կրող մարմին մը՝ նպատակ ունենալով իր շուրջ Համախմբել արտասահմանի բոլոր կաղմակերպութիւնները, գոյացընել «Հիմնադրամ» մը եւ անցնիլ արտասահման դիւանագիտութեան դուռնե-

Եթ բաղիսելու «Հայկական Հարցի» բարեցածող լուծման համար :

Պօղոս փաշայի կոչը աղմկեց արտասահմանի հայ դաղութին կեանքը, բայց մենք լուսութիւն պահեցինք Պօղոս փաշայի առած ձեռնարկներու հանդէպ՝ նկատի ունենալով ազգային մեծ ճղնաժամը եւ փաշայի անձնառութեան օդտակարութիւնը ապազայ դիւանազիտական յարարերութիւններու ընթացքին : Իրերու այս պիսի ուայմաններուն մէջ՝ օր մը Ամերիկայի Հ. Յ. Կեդր. Կոմիտէս կստանոյ հետեւեալ նամակը. —

Մայիս 8, 1915, Նիւ Եօրք
Հ. Յ. Դ. Կուսակցութեան Ամեր. ի

Կեդրոնական Կոմիտէի,

Յարգելի հայրենակիցներ,

Մայիս 2-ին Նիւ Եօրքի մէջ գումարեցաւ ժողով մը Նուպար փաշայի կոչին վրա խորհրդակցելու համար : Ժողովին ներկայ էին,

Պատ. Խ. Կ. Պէննէեան

Պատ. Հ. Յ. Խազոյեան

Տոքթ. Ա. Այլազեան

Տոքթ. Մ. Մ. Գարբիէլեան

Տիարք. Վահան Քիւրքճեան

Մ. Յ. Անանիկեան

Գ. Կիրակոսեան

Ա. Սէլեան

Յ. Դերձակեան

Ն. Կիւմիւչկեարտան

Յետ երկար խորհրդակցութեան ժողովը որդեգրեց նուպար փաշայի կոչք ներկայ ճգնաժամին բազմադիմի պահանջներուն պատասխանելու համար աղդային ընդհանուր եւ համերաշխ դործակցութիւն մը իրականացնելու նպատակու, ընդունեց նաև նորին վսեմութեան նախադահութեան ներքեւ կազմւած նոր մարմնի անունը, որ է «Ազգային Շահերու Պաշտպանութեան Յանձնախումբ» :

Հ. Բ. Բ. Միութեան Ամերիկայի Շըրջանակային Յանձնախումբը Միութեան վսեմափայլ նախադահին հրահանդին համաձայն արդէն դադրեցուցած է կովկասի աղէտեալներու համար բացւած հանգանակութիւնը, որպէսզի օրինակ եւ դիւրութիւն ընծայէ ընդհանուր գործակցութեան առաջարկը իրականացնելու :

Վասահ ըլլալով որ այս նպատակը աղդային շահերու պաշտպանութեան հոգը ունեցող բոլոր հայ Մարմիններու եւ կազմակերպութիւններու ընդունելի է և ցանկալի, Յանձնախումբին Պործադիր Մար-

մինը պաշտօն յանձնած է Պօսթօնարնակ տիարց Գ. Կիրակոսեանի, Ա. Սէլեանի և Յ. Դերձակեանի, ձեզ հետ բանակցելու այս խնդրին վրա :

Քաջայոյս Ենք որ յիշեալ աղգայիններու հետ ձեր խորհրդակցութիւնը կուտայ բաղձացւած արդիւնքը, եւ դուք սրտագին յօժարութեամբ պիտի հաւանիք համերաշխ գործակցութեան, որպէսզ զի բոլորս միասին կարենանք միացնել մեր ճիղերը յամոքումն հայ տառապանքին եւ ի յաջող լուծումն Հայկական Դատին :

Մաղթելով յաջողութիւն ձեր յառաջիկայ խորհրդակցութեանց,

Մնամք սիրալիր ողջոյններով,

Ի դիմաց ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐՈՒ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՉՆԱԽՄԲԻՆ

Ատենադպիր

Ատենապետ

Մ. Յ. ԱՆԱՆԻԿԵԱՆ

Ա. ԱՅՎԱԶԵԱՆ

Ինչու կերեւի վերի նամակէն, Հ. Բ. Ռ. Միութեան Ամերիկայի Շրջանակային նանձնախումբը Պօղոս փաշայի կոչք ըստանալով անմիջապէս կդադրեցնէ Կովկաս ապաստանած աղէտեալներու համար բացւած հանգանակութիւնը, կկազմէ Ամերիկայի Ալղզային Շահերու Պաշտպա-

նութեան Յանձնախումբ»ը և մեզ կհրա-
իրէ ամէն ինչ թողած համախմբւիլ Պո-
ղոս փաշտյի շուրջը և զործել աղղային
շահերու համար :

Մենք «Աղղային Շահերու Պաշտպանու-
թեան Յանձնախմբ»ին դրկեցինք հե-
տեւեալ որատասխանը .—

Պուրօն, Մայիս 20, 1915
Աղղային Շահերու Պաշտպանութեան

Յանձնախմբին,

Նիւ Եօրք

Յարդելի Հայրենակիցներ,

Ստացած ենք ձեր մայիս 8 թւակիր նա-
մակը :

Պէտք կզգանք շեշտել թէ Հ. Յ. Դաշ-
նակցութիւնը միշտ անկեղծօրէն փափա-
քած է ու աշխատած է Հայկական Հարցի
շուրջ Հայութիւնն իր ամրապնդութեան մէջ
Հաւաքւած տեսնել, ըլլայ այդ մարտա-
կան թէ դիւնապիտական ձեւով :

Պողոս Նուզար փաշտյի 1912-1913 տո-
րիներու կաթողիկոսական ողատպամտու-
րութեան՝ Հ. Յ. Դաշնակցութեան կող-
մէ ցոյց տրւած վերաբերումը նորագոյն
փաստերէն մէկն է մեր Հաւաքւին ու
զործունէութեան :

Մենք ձեր նամակով ցոյց տւած Պո-

թօնարնակ երեք անձնաւորութեանց հետ
անսպաշտօն խօսակցութեան մէջ ալ եր-
կարօրէն պարզաբանեցինք մեր տեսակէ-
տը, որ իրը պատասխան ձեր նամակին
ալ այստեղը կկրկնենք :

Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի
Մարմինը, միշտ պատրաստ է իր դործակ-
ցութիւնը բերել Հայկական Հարցին հետ
կապւած ուևէ քայլվ, երբ ան կրդիմի ազ-
գային կամքէն ու հաւատքէն եւ այդ ծը-
բազիրը գոնէ իր ընդհանուր զծերուն
մէջ մեզ ծանօթ կըլլայ: Հետեւարար բա-
րի եղէք մեզ իմացնել կարելի մանրա-
մասնութիւնները Պօղոս Նուպար փաշայի
վերջին ծրագրին, որպէսզի մենք ալ կա-
րենանք մեր դիրքն ու գերը ճշգել այդ
ուղղութեամբ առնելիք քայլերու հան-
դէու :

Յարգանօք

Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵ

Մեր նամակին մտքերուն վերլուծումը
պարզ է եւ մեկին: Մենք կհամերաշխինք
եւ կաջակցինք այն ամէն ազգային հասա-
րակական ձեռնարկներուն, եթէ անոնց
մանրամասնութիւնները ծանօթ ըլլան մե-
զի եւ անոնք բղխած ըլլան ազգային կամ-
քէն:

Ազգային Շահերու Պաշտպանութեան
Յանձնախումբը մեր նամակին որպէս պա-
տասխան կղրկէ մեզ Հետեւեալ նամակը—
թիի 149

Նիւ Եօրք, 1915, Յունիս 24
Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէ,

Պուրօն, Մէս.

Միրելի Հայրենակիցներ,

Հաճոյքն ունեցած ենք իր ժամանակին
ստանալու ձեր ժայխ 20 թւակիր դրու-
թիւնը, և կցաւինք որ մեր կամքէն ան-
կախ պատճառներով չկրցանք աւելի կա-
նուխ պատասխանել անոր :

Մեր Յանձնաժողովը կազմւած է ի պա-
տասխան Պօղոս փաշա Նուպարի կոչին,
և նպատակ ունի աջակցիլ անոր ջանքե-
րուն, այն վստահութեամբ թէ նորին
վսեմութիւնը և իր խորհրդակիցները
կարող են պարագային ոլահանջած լաւա-
գոյն եղանակներով վարելու ազգային
շահերու պաշտպանութեան գործը : Հե-
տեւարար մենք չենք կարծեր որ օգտա-
կար կամ պատշաճ է իրմէ բացատրու-
թիւններ ոլահանջել իր գործունէութեան
և զանակի նկատմամբ : Իսկ իրեւ ամ-
րողջացուցիչ մասը այն բանակցութեանց

որ մեր Յանձնաժողովին անունով ձեր
մօտ կատարւած էին ասկէ առաջ, այսօր
ձեր ուշադրութիւնը կհրաւիրենք Հեսեւ-
լալ ծրագրին վրա :

ա. — Ամերիկայի Հայոց երկու եկեղե-
ցական եւ Հինգ քաղաքական կազմակեր-
պութիւններու իւրաքանչիւրին կողմէ
ընտրւին Երկ-Երկու լիազօր ներկայացու-
ցիչներ, եւ անոնցմէ կազմւի մարմին մը
«Ազգային Հիմնադրամի Ամերիկայի
Յանձնախմբ» անունով : (Եկեղեցական
մարմիններն են, Հայ Առաքելական եկե-
ղեցին, եւ Հայ Աւետ. Միութիւնը : Քա-
ղաքական կազմակերպութիւններն են, Հ.
Յ. Դաշնակցութիւնը, Հ. Ս. Ռ. Կուսակ-
ցութիւնը, Ս. Դ. Հնչակեան Կուսացու-
թիւնը, Վեր. Հնչ. Կուսակցութիւնը եւ
նորակազմ Ազգային Շահերու Պաշտպա-
նութեան Միութիւնը) :

բ. — Ազգային Հիմնադրամի Ամերիկ-
ան Յանձնախմբին պաշտօնը պիտի ըլ-
լայ նիւթապէս եւ բարոյապէս աջակցիլ
Ազգային Պատուիրակութեան, որ նշանակ-
ւած է Վեհ. Կաթողիկոսէն, եւ որ կդըտ-
նըւի Պօղոս Նուոլար փաշայի նախագա-
հութեան ներքեւ : Յանձնախմբը հաշիւ-
չպիտի պահանջէ դրամներու մատակա-

բարութեան կերպին նկատմամբ . բայց
պիտի գործէ այն հասկացողութեամբ թէ
անոնք պիտի յատկացւին ազգային ամէն
տեսակ շահերու պաշտպանութեան , ինչ-
ոքս որ պահանջեն դէպքերը եւ պարա-
պաները . եւ ինչ գումար որ աւելնայ պի-
տի յանձնեի կաթողիկոսին :

Պ .— Այդ Յանձնախմբին նախաձեռ-
նութեամբ Ամերիկայի հայարնակ կեղ-
րոններու մէջ Հրապարակային ժողովներ
պիտի կատարւին հանդանակութեան հա-
մար , եւ զուտ արդիւնքները գանձումնե-
րու թւականէն մինչեւ մէկ ամիս ամբող-
ջովին եւ անպայման կերպով պիտի դր-
կըւին Պօղոս Նուապար փաշային :

Պ .— Յանձնախմբին Հրապարակային
ժողովները պիտի ծառայեն միմիայն ի-
րեն յատուկ նպատակին եւ ուրիշ ոեւէ
ծրագրի կամ դադարարի ծաւալման մի-
ջոց չպիտի գործածւին :

Ե .— Յանձնախմբին մէջ ներկայա-
ցուցիչ ունեցող կազմակերպութիւններէն
իւրաքանչիւրը պիտի շարունակէ իր ան-
ջատ գործունէութիւնը , իրեն սեփական
նպատակին եւ ծրագրին համաձայն :

Պ .— Յանձնախմբին գոյութիւնը պի-
տի տեւէ որչափ ատեն որ շարունակւի

Ազգային Պատուիրակութեան սլաշտօնը :
Այդ ժամանակամիջոցին հրաժարող կամ
սեւէ պատճառով պակսող լիազօրին տեղը
ոլիսի նշանակւի ուրիշ մը , իր պատկան-
հալ կազմակերպութեան կողմէ :

Զեր նկատողութեան ներկայացնելով
այս ծրագիրը կխնդրենք որ հաճիք հա-
զորդել ձեր զիտողութիւնները և թելա-
սրութիւնները : Մեզի կթւի թէ հայրե-
նիքի ներկայ պէտքերուն հանդէպ Ամե-
րիկայի մէջ համերաշխ գործակցութեան
յարմարագոյն կերպն է այդ , որ կրնայ
համբայ մը հարթել աւելի ընդարձակ եւ
աւելի սերտ աշխատութեանց ազագային
մէջ :

Մնամք յարգածօք ,

Ի զիմաց ԿԵԴՐ . ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ
Ատենադպիր Ատենապետ
M. H. Ananikian Ա . ԱՅՎԱԶԵԱՆ

Իր վերի նամակով «Ազգային Շահերու
Պաշտպանութեան Յանձնախումբ»ը մեզ
խորհուրդ կուտայ «Եորին Վսկմութեան»
գործունէութեան ծրագրով չհետաքրքրու-
թիլ , անոր զրկւելիք «զրամներու մատա-
կարարութեան կերպին նկատմամբ» հա-
շիւ չպահանջել և ինքզինքը համարելով
«Հինգերորդ» քաղաքական կուսակցու-

թիւն՝ կառաջարկէ երկ-երկու ներկայաց-
ցուցիչներով կազմել «Ազգ. Հիմնադրա-
մի Ամերիկեան Յանձնախումբ» անունով
մարմին մը եւ սկսիլ գաղութային հան-
դանակութեան եւ զրամները դրկել Պօ-
ղոս Նուար փաշային :

Ստանալով վերի նամակը մենք դիմե-
ցինք Ազգ. Շահերու Պաշտ. Յանձնա-
խմբին հետեւեալ նամակով .—

Թիվ 176

Պուրօն, 15 Յուլիս, 1915
Ազգային Շահերու Պատոպանութեան
Ամերիկայի Կեդր. Յանձնախմբին,
Նիւ Նօրք

Յարդելի հայրենակիցներ,

Զեր յունիս 24 թւակիր գրութիւնը ըս-
տանալու հաճոյքն ունեցած ենք :

Մայիս 8 թւակիր նամակով կոչ կընէիք
մեզի բոլորւիլ իրրեւ աղքային համե-
րաշխութեան կեղրոն, Պօղոս փաշա Նու-
արդի կազմած «Ազգային Շահերու Պաշտ-
ուանութեան Յանձնախմբ»ին շուրջ :

Ցիշեալ մարմնի գործունէութեան աս-
ուղարէղը եւ հետապնդած նպատակը մեզի
անձանօթ ըլլալով՝ խնդրած էինք, որ
հաճէիք անոր ծրագիրը դէթ իր ընդհա-

նուր գծերուն մէջ հաղորդել մեղի : Զեր
վերջին գրտթիւնով կպատասխանէք թէ
դուք չէք կարծեր որ օգտակար կամ պատ-
շաճ է իրմէ (Պօղոս փաշա Նուպարէն)՝
բացատրութիւն պահանջել իր գործունէ-
ութեան եղանակին նկատմամբ, եւ նոր
առաջարկ կրերէք, բոլորւիլ Պօղոս փա-
շա Նուպարի նախազահութեան տակ ե-
ղած պատւիրակութեան շուրջ :

Այս առթիւ ձեր կողմէ տրւած Ամերի-
կայի երկու եկեղեցական, չորս քաղա-
քական կուսակցութիւններու եւ Ազգային
Շահերու Պաշտպանութեան Միութեան
երկ-երկու ներկայացուցիչներէ բաղկա-
ցած Ազգային Հիմնադրամի Ամերիկեան
Յանձնախումբ կազմելու առաջարկն եւ ա-
նոր գործունէութեան եղանակն ընդգծող
ծրագիրը, որ մեր ուշադրութեան կյանձ-
նէիք, ցոյց կուտան թէ Պօղոս փաշա
Նուպարի նախազահութեան տակ եղող
պատւիրակութեան միսիօնի մասին, թոյլ
տւէք ըսել մեղ, թէ տարակարծիք ենք ձեզ
Հետ :

Խնդրելով, որ հաճիք հաղորդել մեղի
ձեր կարծիքը անոր միսիօնի մասին՝ կը
ցանկանք հետեւեալը ձեր ուշադրութեան

յահճճել :

Մեր ստացած տեղեկութիւններուն համաձայն, Պօղոս փաշա Նուպարի նախագահութեան տակ Եղող պատրիքակութեան միսիօնը միմիայն դիւանագիտական է : ՄԵնք ամենայն սիրով օժանդակած ենք և պատրաստ ենք օժանդակելու պատրիքակութեան բարեյաջող Ելքին :

Նկատի ունենալով, սակայն, որ կամաւորներու մատակարարութեան, փախըստականներու հոգատարութեան եւ երկրի ինքնապաշտպանութեան կազմակերպման պէս հսկայական պէտքեր կան մեր առջեւ, նկատի ունենալով նաեւ, որ պատրիքակութիւնը նշանակովի կազմւած է երնականարար հարկ Եղած ծախքերու գումարը կհայթայթւի զայն նշանակող մարմնի կողմէն՝ հետեւարար եւ բնականարար մենք նողատակայարմար չենք զբոներ դիւանագիտական դիմումներու համեմատարար փոքր ծախքերուն համար հրապարակային հանդանակութիւններու դիմել :

Ի վերջոյ՝ կրկնելով այն շեշտը, զոր դուք եւս զբած էիք ընդհանուր համերաշխութեան մը վրա կփափաքէինք ձեր ուշադրութիւնը հրաւիրել Հայկական

ԿԵՂՐՈՇՆԱԼՈՅՆ Աղդային Բիւրօի վրա, որ
ամրող մէկուկէս միլիօն ժողովրդի
կողմէ ընտրւած պատկառելի մարմին մըն
է, որ իր մէջ կխոտացնէ կովկասահայու-
թեան բոլոր կարեւոր հոսանքները եւ կը
վայելէ կաթողիկոսին հաւանութիւնն ու
հովանաւորութիւնը եւ ամրող կովկա-
սահայութեան համակրութիւնն ու աջակ
ցութիւնը:

ՄԵՂԻ ցանկալի էր զիտնալ, թէ ի՞նչ է
ձեր դիրքն այդ մարմնի հանգէպ: Զէ՞ք
կարծեր, որ Հայկական ԿԵՂՐՈՇՆԱԼՈՅՆ Աղ-
դային Բիւրօն, թէ իր ընտրութեան եղա-
նակով, թէ կազմով եւ թէ մինչեւ հիմա
կատարած հոյակապ աշխատանքով աւե-
լի յարմարութիւններ ունի համազգային
համերաշխատթեան մը առանցքը կազմե-
լու:

ՄԵՐ կարծիքով ձեր ներկայացուցած
ծրագրին մէջ վերոյիշեալներէն զատ՝
կային ուրիշ առարկելի կէտեր եւս, ու-
րոնց, սակայն, անդրադառնալ անհրա-
ժեշտ չենք նկատեր մեր բանակցութեանց
ներկայ փուլին մէջ:

Մնամք յարգանիներով
Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՑԻ ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԵ

Բացատրութիւններ չենք տար: ՄԵՐ

սպատասխանին մէջ չենք առաջնորդւած
ենք մեր կուսակցութեան 25 տարիներու
դաւանած սկզբունքներովը, — Ազգային
կամքը վեր դասել բոլոր թէ մեծ եւ թէ
փոքր անհատներու կամքէն և չլծւիլ դոր
ծի մը առանց ծանօթանալու անոր կարե-
լի մանրամասնութիւններուն։ Ուրիշ
կերպ ալ չենք կրնար վարւիլ։ Կուսակ-
ցութիւն մը, որ իր հետեւը ունի ժողո-
վրդական ուժը, միշտ պէտք է Ենթարկ-
ւի ժողովրդական կամքին եւ ոչ թէ ան-
հատներու կամքին, որոնք 11-րդ ժամուն
հրապարակ կուգան մեզ քաղաքական
նոր ծրագիրներ առաջարկելու եւ դասեր
տալու։ Վիրաւորանքներ ընել չենք ու-
ղած, բայց ըստ ենք ճշմարտութիւնը եւ
չենք վախնար դնել զայն հայ հասարա-
կութեան առջեւ։

Մեր նամակին «Ազգային Շահերու
Պաշտպանութեան Միութիւն»ը կպատաս-
խանէ հետեւեալ նամակով։

Նիւ Եօրք, Օգոստ. 8, 1915
Հայ Յեղափոխական Դաւանակցութեան

Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէ,
Պուրօն

Միրելի հայրենակիցներ,

Ինչպէս արդէն պարզած ենք մեր բա-

նակցութեանց սկիզբէն ի վեր, Աղգային
Շահերու Պաշտպանութեան Միութիւնը
հիմնւած է ի պատասխան ազգային պատ-
շիրակութեան նախագահին, Նուպար
փաշայի, առ համայն ուղղած կրկնակի
կոչերուն :

Ազգային Շահերու Պաշտպանութեան
միակ նպատակն է նիւթապէս եւ բարո-
յապէս ուժ տալ ազգային պատշիրակու-
թեան, ուստի հանդանակւած գումարը
կուզէ զնել, առանց պայմանի եւ վերա-
պահութեան, տրամադրութեան ներքեւ
Նուպար փաշայի, որ պիտի գործածէ
զայն ինչպէս որ պէտքերը եւ պարագանե-
րը պահանջնն :

Եթէ այս նպատակին վրա կարելի ըլ-
լայ մեզ համաձայնիլ եւ միաբանու-
թեամբ գործել, երջանիկ պիտի ըլլանք
ողջունելու ազգային բոլոր կազմակեր-
պութիւններու միարան և միասիրտ գոր-
ծակցութիւնը ներկայ ճղնաժամի ահաւոր
օրերուն մէջ :

Մնամք յարգանիներով
Վասն Ատենադպրի Ատենապետ
ՀԱՅԿԱԿ Յ. ԽԱԶՈՅԵԱՆ Ա. ԱՅՎԱԶԵԱՆ

Ոչ մէկ բացատրութիւն : Մենք պէտք է
ենթարկւէինք անոնց եւ փաշայի կամքին

առանց այլեւայլի : Ազգային Շահերու
Պաշտպանութեան Միութեան վերջնազի-
րըն է այս եւ կթւի թէ ասով ցանկութիւն
ունին թղթակցութիւններուն վերջ տալ :
Եւ մենք կուղղենք անոնց մեր հետեւեալ
վերջին նամակը :—

Պուրօն, Օգոստ 16, 1915
Ազգային Շահերու Պաշտպանութեան
Միութեան Կեդր. Ցանձնախմբին,
Նիւ Եօրք

Յարդելի Հայրենակիցներ,

Ստացած ենք ձեր օդուտոս Տ թւակիր
նամակը, որ դժբաղդարար մեր վերջին
նամակով դրած հարցերուն ոչ միայն շէր
ողատասխաներ, այլ զանոնք չէր իսկ շօ-
շափեր :

Մենք որքան կրցանք մակարերել ձեր
մինչեւ հիմա մեզ հետ ունեցած թղթակ-
ցութիւններէն՝ ձեր նպատակն է Պօղոս
փաշայի նախադահութեան տակ դտնւած
ողատիրակութեան նիւթապէս աջակցի՝
դլխաւորաբար Հրապարակային հանդա-
նակութիւններու միջոցով եւ այդ նպա-
տակին համար կխնդրէիք մեր դործակ-
ցութիւնը :

Զեզ հետ կատարելապէս համաձայն ըլ-
լալով հանդերձ ողատիրակութեան վրա-

տահւած դիւանագիտական գործի կարեւորութեան մասին, որուն անցեալին մէջ միշտ օժանդակած ենք եւ այժմ ալ կօժանդակենք, բայց նկատի ունենալով որ պատւիրակութիւնը միմիայն դիւանագիտական ձեռնարկներ ընելու համար կարդրւած է, որ դիւանագիտական քայլերու համար խոչոր գումարներու պէտք չկայ եւ սրէտք եղածն ալ ի հարկէ պատւիրակութիւնը նշանակող հաստատութիւնը կը հողայ, որ արտասահմանի հայութիւնը կամաւորական գունդերու զինման եւ պարենաւորման, փախստականներու հողատարութեան և երկրի ինքնապաշտպանութեան կազմակերպման պէս խոչոր և անցետաձգելի պարտաւորութիւններ ունի, մէնք նախատակայարմար եւ օդտակար չենք նկատեր պատւիրակութեան համար եւ անոր անունով առանձին հանգանակութիւններ ընել:

Մեամբ յարգանօֆ

Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵ

Առանց մեր կողմէն ուեէ վերլուծումի ալ ուշադիր ընթերցողին համար դժւար պիտի չըլլար նշմարել այն անհեթեթութիւնները, զոր «Ազգ. Շահերու Պաշտ. նանձնախումբ»ը մատնած է իր կեդր.

Կօմիտէի հետ ունեցած բանակցութիւններու ընթացքին, բայց աւելորդ չենք նը-կատեր մէկ քանի կէտեր վեր բերել եւ քիչ մը աւելի պարզել:

Նախ ազգային այս գերազանցապէս ճըդ նաժամային օրերուն մէջ մեծագոյն յիմարութիւն էր քաղաքական նոր կազմակերպութիւն հիմնելու փորձը: Ոչ միայն քաղաքակիրթ ազգերու, այլ կիսաքաղաքակիրթ ժողովուրդներու կեանքին մէջ անդամ պատմութիւնը այդպիսի դէպք մը արձանագրած չէ: Մանաւանդ որ մենք մեր դժրազդ իրականութեան մէջ արդէն ոլէտք եղածէն աւելի քաղաքական կազմակերպութիւններ ունէինք: Այսօր անոնց թիւը աւելցնելու օրը չէր, այլ զանոնք համերաշխ գործակցութեան եւ լծակցութեան մղելու ժամը:

Յետոյ 5—10 հոգի մէկտեղ գալով եւ շողշողուն անուն մը հազնելով քաղաքական կազմակերպութիւն չկազմւիր: Քաղաքական նոր կազմակերպութեան մը համար հարկաւոր է քաղաքական եւ տնտեսական նոր գետին մը, որ զրաււած չըլլայ արդէն դոյցութիւն ունեցող քաղաքական կազմակերպութիւններու կողմէ: Ուրիշ խօսքով ունէ քաղաքական կազմակերպու-

թիւն պէտք է ունենայ իր ինքնուրոյն ծը-
րագիրը, ուր ամփոփւած ըլլան այն հիմ-
նական սկզբունքները, որոնց աղդային
կեանքի մէջ ներմուծման եւ իրականաց-
ման համար կձգտի ինք, այդ կազմակեր-
պութիւնը։ Ահա այդ ծրագիրն է որ
կեղր։ Կօմիտէն կպահանջէր «Աղդային
Շահերու Պաշտ։ Յանձնախմբի տեղա-
յին ներկայացուցիչներէն, բայց անոնք
մերժեցին տալ, գուցէ անոր համար որ
չունէին ուեւէ ծրագիր։

Աւելի զարմանալին կայ։

«Աղդ. Շահերու Պաշտ։ Յանձնախմբ-
րոյի տեղային մասնաճիւղը Հ. Յ. Դ.
կեղր։ Կօմիտէի աջակցութիւնը կիսնդրէ
իր անծանօթ նպատակներու հետապընդ-
ման համար եւ երբ վերջինը, շատ բնակա-
նօրէն, նախ քան իր դիրքը որոշելը կու-
ղէ գոնէ ընդհանուր ծանօթութիւններ ու-
նենալ հետապնդւելիք նպատակի մտաին,
պատասխան կստանայ։ — «մենք չենք կար
ծեր որ օդտակար կամ պատշաճ է իրմէ
(Պօղոս Փաշայէն) բացատրութիւններ պա-
հանջել իր դործունէութեան եղանակին
նկատմամբ Եւ յանձնախումբը հաշիւ
շպիտի պահանջէ դրամներու մտակա-
րարութեան կերպին նկատմամբ։»

Եւ մտածել որ այս ուղեղի և տրամաբանութեան տէր մտադիկ են որ կյաւակնին ազգային գործերու սահմանը իրենց ձեռքերուն մէջ ամփոփել . . .

III

Երբ մենք բանակցութիւններ կվարէինք Ալզ . Շահերու Պաշտպանութեան Միութեան» հետ ընդհանուր գործին շուրջ համախմբւելու եւ համերաշխութեան եզր մը գտնելու համար օտար աղբիւրներէ ալ մեր ընկերներուն միջոցով համերաշխութեան առաջարկներ կը լային մեղի : Թէ մեր ընկերները եւ թէ մենք այդ առաջարկներուն պատասխանեցինք քաղաքավարութեամբ եւ կամք յայտնեցինք համերաշխելու , եթէ միւս մարմինները ընդ առաջ երթային ազգային կամքին :

Օտար աղբիւրէ մը համերաշխութեան կոչ կը լայ մեղ եւ միւս մարմիններուն եւ օր մը Ամերիկայի հայոց Առաջնորդարանէն կոտանանք հետեւեալ համակը . . .

Ուստր 17 յունիս 1915

Պատ. կեդր. կօմիտէին

Հ. Յ. Դ. Ամերիկայի ի Պուրօն

..... Լ. Մ. Փափաք յայտնած ըլլալով Հ. Յ. Դաշնակցութեան և Ազգ. Պաշտպ. Յանձնախմբի մէջ եղած թիւրիմացութեանց վերջ մը տալ եւ համերաշխ գործունէութիւն մը յառաջ բերել, ինչ որ մեր եւս ջերմ փափաքը եղած է միշտ, եւ քանի որ նորին ազնւութիւնը փափաք կյայտնէ անձամբ իսկ ներկայ դտնւիլ այդպիսի համախըմբումի մը, եթէ կանխաւ առ այդ հարկ եղած հողը պատրաստւի, ուստի ներկայիւս կյանձնաբարենք որպէսզի հաճիք դըրաւոր կերպով մեղ յայտնել թէ այդ մասին ի՞նչ են ձեր վերջնական պայմանները եւ ի՞նչ հիմերու վրա կարելի կրնայ ըլլալ փափաքելի համերաշխութիւնը յառաջ բերել:

..... Պարոն Լ. Մ. ի վրա տիտուր տպաւորութիւն մը չթողելու համար՝ կու զենք կանխաւ դժւարութիւնները մասամբ հարթել, ուստի եւ կողասենք ձեր անմիջական պատասխանին, որպէսզի ըստ այնմ որոշենք երկու կողմը միասին հրա-

ւիրելու օրը եւ խմացնենք Պարոն . .Մ . ի
հւս :

Արդ կվափաքինք որ դոնէ մինչեւ մէկ
շաբաթ հաճիք ձեր պատասխանը մեզ
հասցնել :

Ճիշտ ասոր մէկ օրինակն ալ զրկած
ենք Ազգ . Պաշտպ . յանձնախմբին :

Մնամ աղօթարար
ԱՐՍԵՆ Վ . Ե . ՎԵՀՈՒԵԿ
Առաջնորդ հայոց Ամերիկայի

Առաջնորդի նամակին մենք ուղարկե-
ցինք հետեւեալ պատասխանը :

Թիւ 172

Յունիս 29, 1915

Արժ . Արսեն Վ . Վեհուեկի

Ուստր

Ի պատասխան ձեր յունիս 17 թը-
ւակիր նամակին կվութանք պատասխա-
նել, որ . . . պ . Լ . Մ . արդէն ուրիշ մի-
ջոցով ալ՝ ինչողէս նաեւ ուրիշ մարմին
մը եւս այդ ուղղութեամբ դիմումներ կա-
տարած է մեզ մօտ եւ մենք բանակցու-
թեան մէջ ենք . կապասենք մեր բանակ-
ցութիւններուն ելքին :

Հ . Յ . Դ . ԱՄԵՐԻԿ . ԿԵԴ . ԿՕՄԻՏԵ

Առաջնորդը կպատասխանէ մեր նամա-
կին հետեւեալ նամակով :

Ուստր 10 յուլիս 1915

Մեծայարգ անդամն

Հ. Յ. Դ. կեդր. կօմիտէի

Պառքօն

Որպէս Առաջնորդ հայոց Ամերիկայի՝
Ազգ. Պաշտ. Յանձնիք մէջ իմ ունեցած
նախագահութեան պաշտօնէն անկախա-
րար՝ երկու կողմի տրամադրութիւնները
մօտէն ուսումնասիրած ըլլալով՝ այն
համոզումը դոյացուցած ենք թէ՝ հայրե-
նիքի ներկայ ահոելի կացութեան առջեւ՝
երկու կողմին մէջ ալ տրամադրութիւն
կայ փոխադարձ դիջողութեամբ համե-
րաշխութիւն դոյացնելու եւ միացած ու-
ժով կատարելու մեր պարտականութիւ-
նը, ուստի որպէս շարունակութիւն մեր
յունիս 17 թիւ 709 պաշտօնադրին, ներ-
կայիւս կհրաւիրենք պատւարժան կօմի-
տէդ իր կողմանէ երկու ներկայացուցիչ-
ներ դրկել այս հինգշարթի օգոստ. 12,
երեկոյեան ժամը եօթն ու կէսին Առաջնոր-
դարան, ուր հրաւիրած եմք նաեւ «Ազգ.
Պաշտապ. Յանձնախումբն» ու մեծայարդ
պ. Լ. Մ : Նկատի ունենալով
հայրենիքի աղէտալի դրութիւնը՝ յար-
մար դատեցինք աւելորդ բանակցութիւն-
ներով ժամավաճառ ըլլալու համար՝

այս հինգշարթի մեր եւ երկու կողմի ներկայութեան համաձայնութեան դալ երկրորդական կէտերու մասին :

Մնամք աղօքաբար
ԱՐՍԵՆ Վ. Ե. ՎԵՀՈՒՆԻ
Առաջնորդ հայոց Ամերիկայի

Առաջնորդարանի նամակին մեր քարտուղարը կազմականութեանէ հետեւեալ նամակով :

Թիւ 210

Օգոստ . 10 1915

Գեր . Արսեն Վ. Վեհունի

Առաջ . հայոց Ամերիկայի

Ուստի

Ստացած եմ ձեր յուլիս 10 (իմա օդոս . 10) թւակիր նամակը : Կցաւիմ ըսելու , որ կեղրոնական կօմիտէն չարաթ օրէն առաջ հնարաւորութիւն չունի ժողով գումարելու : Շարաթ օրը ձեր գրութիւնը առաջին պատեհութեամբ ժողովին կներկայացնեմ :

Յարգանօֆ

Հ. Յ. Դ. ԱՄԵՐ. ԿԵԴ. ԿՕՄԻՏԵԻ

Քարտուղար Յ. Յ. Դարրինեան

Առաջնորդը մեր քարտուղարին կազմականութեանէ հետեւեալ նամակով :

Ուստք 11 օգոստ . 1915

Մեծ . Յ . Յ . Դարրինեան

Քարտուղար Հ . Յ . Դ . Ամեր . Կ . Կոմիտէի
ի Պուրօն

Ստանալով ձեր նամակը հեռազրով և
հեռաձայնով տեղեկացուցինք
լ Մ . . . ին և «Ազգ . Պաշտ . Յանձ-
նախմբին» թէ ժողովը յետաձգած ենք :

Աւելի յարմար պիտի ըլլար ժողովը
գումարել Պօսթօնի հովիւ դեր . Տ . Մու-
շեղ արքեպիսոփի տունը , որով թէ ա-
ւելորդ ծախքեր խնայւած կլինին և թէ
զիւրութիւն կը լլայ ժողովին ներկայ զըս-
նըւելիք անձանց համար , որոնց մեծա-
դոյն մասը Պօսթօն և շրջակաները կը
դանւին . իսկ ժողովը գումարել օգոստոս
20 ուրբաթ երեկոյ :

Հաճեցէք այս մասին պատ . Կեդր . Կո-
միտէի պատասխանը կիրակի օրը մեզ
հասցնել ի Փրօվիտէնս , ուր պիտի զըտ-
նըւինք , որպէսզի ժամանակ ունենանք
միւսներուն ալ հաղորդել : Մեր Փրօվի-
տէնսի հասցէն է հայոց եկեղեցին (corn .
Jefferson and Common sts .) իսկ երկու-
շարթի կվերադառնանք Ուստք :

Անհամբեր սպասելով կօմիտէի պատասխանին

Մնամք աղօքաբար

ԱՐՍԻՆ Վ. Ե. ՎԵՀՈՒԻՆԻ

Առաջնորդ հայոց Ամերիկայի

ԿԵՂՐ. կօմիտէն ծանօթանալով առաջնորդի նամակի բովանդակութեան՝ անմիջապէս առաջնորդին կուզգէ հետեւեալ նամակը :

Թիւ 212

Օգոստ . 16 ,1915

Գեր. Արսէն Վ. Ե. ՎԵՀՈՒԻՆԻ

Առաջն. հայոց Ամերիկայի

Ուսուր

Ստացած ենք ձեր օգոստ . 10 թւակիր նամակը , որուն մէջ հաղորդած էիք թէ՝ «Ազգ . Պաշտպ . Յանձնախմբ»ի մէջ ունեցած ձեր պաշտօնէն անկախաբար երկու կողմի տրամադրութիւնները մօտէն ուսումնասիրած ըլլալով՝ համոզում գոյացուցած էք թէ՝ երկու կողմին մէջ ալ տրամադրութիւն կայ փոխադարձ զիջողութիւններով համերաշխութիւն գոյացընել , եւ կհրաւիրէիք մեր կողմէ երկու ներկայացուցիչ ներկայ ըլլալու հինդշաբթի , օգոստ . 12 , ժամը եօթ ու կէսին նշանակւած հաւաքոյթին :

Մեր քարտուղարը արդէն պատասխա-

նած է ձեզ թէ հնարաւորութիւն չունինք
այդ օրը ներկայացուցիչ դրկել, քանի որ
շարաթ օրը ժողով պիտի ունենայինք :

Այս առթիւ անգամ մը եւս շեշտելով
իրական համերաշխութեան միշտ բաղձա-
ցող ըլլալնիս, մենք մօտաւոր անցեալի
դառն փորձերէ վերջ, օդտակար չենք դըտ
ներ ներկայացուցիչներով բանակցութիւն
ներ վարել՝ նախ քան համերաշխութեան
էական պայմաններուն դրաւոր առաջար-
կութիւնը : Հետեւարար կսպասենք ձեզմէ
կամ ուղղակի ձեր նախագահութեան տակ
գտնւած յանձնախմբէն լսել այն պայ-
մանները, որ անհրաժեշտ կնկատւին բաղ-
ձացւած համերաշխութեան համար :

Մնամք յարգանօֆ

Հ. Յ. Դ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏէ

Միջակուսակցական յանձնախմբի լուծ-
ման պարագաները, եւ անոնցմէ յառաջ ե-
կած բանակոիւները մեզ կստիպէին սե-
ղանի շուրջ հաւաքւելէ առաջ լսել համե-
րաշխութեան պայմանները, եւ այդ պատ-
ճառով մենք միշտ պահանջած ենք դրա-
ւոր պայմաններով գործի սկսիլ : Առաջ-
նորդարանը սակայն նորէն կղիմէ մեզ
հետեւեալ նամակով :

Մեծայարգ անդամք

Հ . Յ . Դ . Կեդր . Կոմիտէի

Պատոս

Սրտի անհուն դառնութեամբ ստացանք
պատ . կօմիտէիդ օգոստ . 16 թւակիրը ,
որով պահանջ կդնէք համերաշխելէ առաջ
լսել «Ազգ . Պաշտ . Յանձնախմբի» պայ-
մանները , ինչ որ ներկայ պարագային
մեղ համար մերժումի համազատասխան
է :

Մեր համոզումը այն էր թէ հայրենիքի
ընածննումի այս տիտուր վայրկեանին բո-
լոր հայերը անպայման մօտենալու են ի-
րարու ամէն փոխադարձ զիջողութիւն
յանձն առնելով եւ Կ . կօմիտէիդ ներկա-
յացուցիչ պ . Խ . Գալուստեանի* հետ մեր
տեսակցութենչ այն համոզումը գոյա-
ցուցած էր թէ՝ ձեր ըմբռնածն ալ այն

* ԾԱՆՕԹ . — Թիւրիմացութիւններու
տեղի չտալու հսմար ըսենք որ ընկեր Խ .
Գալուստեան բոլորովին այլ խնդրով
գացած էր առաջնորդարան եւ համերաշ-
խութեան վերաբերմամբ ուեւէ միսիօն
չունէր :

էր՝ ինչպէս որ էր նաեւ «Աղդ. Պաշտպ. յանձնախմբի» տրամադրութիւնը :

Առանց յուսահատելու անդամ մը եւս կթախանձենք որ հայրենիքի աղեխարչ վիճակը աչքերնուդ առջեւ պատկերացնէք եւ աւելորդ ձեւակերպութեանց ժամավա- ճառութենէն ազատէք զմեզ եւ դիւսացը- նէք մեր ընդհանուր համերաշխութեան Համար առնւած քայլերը :

Սպասելով ձեր բարեհաճ որատասիանին
Մնամք ազօթարար

ԱՐՄԵՆ Վ. Ե. ՎԵՇՈՒՆԻ

Առաջնորդ հայոց Ամերիկայի

Մեր պատասխանը վերեւի նամակին
Հետեւեալն է .

Թիւ 222

Սեպտ 7, 15

Գեր. Արսեն Վ. Ե. Վեհունի

Առաջ. հայոց Ամերիկայի

Ուսոր

Ստացած ենք ձեր օգոստ. 26 թւակիր նամակը : Կցաւինք ըսելու, որ սխալ հաս- կըցւած ենք :

Մեր օգոստ. 16 թւակիր նամակով՝ որտրացօրէն ընդ առաջ կերթայինք իրա- կան Համերաշխութեան . որովհետեւ մօ- տաւոր անցեալի ներկայացուցիչներով

բանակցութիւններ վարելու ժամավաճառութիւններու ղառն փորձերն ու հայրենիքի բնաջնջումի այս տխուր վայրկեանին հրամայական պահանջները մեզ կպարտաւորեցնեն, որ ներկայացուցիչներով բանակցութիւններ վարելէ առաջ՝ մեր աշխին առաջ ունենանք համերաշխութեան էական պայմաններու գրաւոր առաջարկութիւնը։ Հետեւարար, կկրկնենք, կսպասենք ձեզմէ կամ ուղղակի ձեր նախադահութեան տակ գտնւած յանձնախմբէն լսել այն պայմանները, որ անհրաժեշտ կնկատեին բաղձացւած համերաշխութեան համար։

Յարգանօք

Հ. Յ. ԱՄԵՐ. ԿԵԴ. ԿՕՄԻՏԵ

Պարզ է մեր միտքը։ Մենք կուղէինք լըսել պայմաններու մասին, որպէսզի խուսափէինք նախկին բանավէճերէն։ Սակայն առաջնորդը մեզ նորէն առանց գրաւոր պայմաններու համերաշխութեան կոչ կընէ հետեւեալ նամակով։

Ուստր սեպ. 8, 1915

Յարգելի վարչութիւն

Հ. Յ. Ա. ԱՄԵՐ. ԿԵԴ. ԿՕՄԻՏԵ

Պուրօն

Ստացանք ձեր 7 սեպտ. թւակիր եւ հա-

մար 222 պաշտօնագիրը :

Մենք, ինչպէս նաեւ Ամերիկայի Աղդ. Պաշտպանութեան Յանձնախումբը, մէկ տեսակէտ միայն ունինք մեր աչքին առջեւ, այն է Հայաստանի եւ Հայութեան աղիտաւոր եւ յուսահատական վիճակը, որուն առջեւ պէտք է խոնարհի ամէն ճշմարիտ հայ, եւ ամէն նկատում մէկդի դրած, միարանի կարելի միջոցներով դարմանել աղէտքը, որ կծանրանայ աղպին վրա : Այս ահաւոր վայրկեաններուն մէջ, մենք եւ յանձնախումբը ոեւէ պայման չունինք համերաշխութեան, մեր միակ նպատակն ու անյետաձգելի փափաքն է համերաշխութիւն մը եւ համադործակցութիւն մը գոյացած տեսնել բոլոր կաղմակերպութիւններէն, զայն ի սպաս դընելու հայ տառապանքին : Եւ որպէսզի կարելի ըլլայ առանց կանխակալ դիտումներու եւ դատումներու այդ համերաշխութիւնը իրականացած տեսնել երկուստեք զիջողութիւններով, մենք յաբմար կը դատենք ներկայացուցչական ժողովի մը միջոցով միասին խորհիլ, եւ միասին դըծել պայմանները : Այսպէսով միայն կը խորհինք թէ տեւական եւ դործնական համերաշխութիւններ կրնան ստեղծւիլ, եւ

արդէն այսպէսով էր որ Ազգ . Պաշտպանութեան Յանձնախումբը յաջողեցաւ հասկացութեան մը դալ եւ Համերաշխիլ Ազգ . Շահերու Պաշտպանութեան յանձնախմբին և Հայ Բողոքական եկեղեցին հետ :

Հետեւարար , եթէ ստուգիւ ձեր կազմակերպութիւնը կփափաքի սրտբացօրէն ընդ առաջ երթալ իրական Համերաշխութեան մը» , անգամ մըն ալ կհրաւիրէնք ձեզ Հաստատել զայն գործնականապէս , այս մասին ձեր հաւանութիւնն յայտնելով : Իսկ այս իրողութիւնը սրտբացօրէն ձեզի Հաղորդելէ վերջ , եթէ տակաւին պիտի այնդէք ձեր դրաւոր պայմաններու առաջարկին վրա , այն ատեն Հաճեցէք ձեր կողմէն դժւած բանաւոր առաջրկներ դրաւորապէս ներկայացնել մեզ , քանի որ , ինչպէս ըսինք , մենք եւ Ա . Պ . յանձնախումբը պայմաններ չունինք , եւ դրաւոր պայմաններով բանակցութիւն մը կնկատենք վտանգաւոր ժամավաճառութիւն մը եւ անհամապատասխան վայրկեանի ահաւորութեան բմբռունումին :

Կցաւինք որ թեմական գործերու բերումով Հարկադրւած ենք մի առժամա-

նակ բացակայիլ Ուստրէն, ուստի ձեր պատասխանը կրնաք ուղարկել մեզ մեր Տիթրօիթի հասցէով, որ է 135 P. O. Box Detroit, Mich.

Սպառելով ձեր պատասխանին,

Մնամք աղօքարար

ԱՐՄԷՆ Վ. Ե. ՎԵՀՌԻԿԻ

Առաջնորդ հայոց Ամերիկայի

Յուսահատած՝ որ մեզ չեն դրկեր գլւրաւոր պայմաններ թէ առաջնորդը եւ թէ անոր նախագահութիւնը ճանչցող մարմինը, եւ բացի ատկէ ազգային ներկայ ճգնաժամը համարելով ծանրակշիռ եւ անյարմար ձգձգումներու, կեղր. կօմիտէն աղղւած օրւայ դէպքերէն, ամէն կարելի զիջումներ յանձն առնելով՝ ուղարկեց Ամերիկայի հայոց առաջնորդին իր գրաւոր պայմանները ամփոփուած հետեւեալ համակին մէջ:

Թիւ 230

Սեպտ. 21, 1915

Գեր. Արսէն Վ. Ե. Վեհունի

Առաջն. հայոց Ամերիկայի

Ուստր

Զեր սեպտ. 8 թւակիր գրութիւնը ստացած ենք: Հաճոյքով կնկատենք որ «Ազգ. Պաշտ. Յանձնախումբ»ը, «Ազգ. Շահերու

Պաշտպանութեան Միութիւնը և հայ Բողոքական Եկեղեցին, Համերաշխութեան անհրաժեշտութիւնը նկատի ունենալով՝ որոշ կէտերու շուրջ հասկացողութեան եկած եւ գործելու ձեւեր ընտրած են։ Հ. Յ. Դաշնակցութիւնը միշտ ցանկացող ըլլալով հայրենիքի անհրաժեշտ պէտքերուն ընդ առաջ երթալ, ընդհանուր աղդային համերաշխ ողբով, կեցած է այն բոլոր մարմիններու կողքին, որոնք վայելած են մեր ազգի մեծամասնութեան համակրանքը, եւ որոնց գործունէութիւնը համապատասխան եղած է մեր ազգային պէտքերուն։

Մեր կարծիքով Ամերիկայի մէջ տեղի ունեցած թիւրիմացութիւնները Հ. Յ. Դաշնակցութեան եւ այլ մարմիններու միջեւ արդիւնքն են մեր ազգային ցաւերու դարմանումի ձեւերուն նկատմամբ եղած կարծիքներու տարրերութեան, եւ ազգային մեծամասնութեան ցանկութեան տարրեր թարգմանումին։

Անցեալ տասը կամ աւելի ամիսներու ընթացքին տեղի ունեցած դէպքերը, որոնք կցոլացնեն ժողովուրդի տրամադրութիւնը, թէ հոս Ամերիկայի մէջ, թէ ուրիշ դաշտութներու եւ թէ կովկասի մէջ,

համարձակութիւն կուտան մեզ յայտարարելու թէ՝ մեր հողածութեան առաջին առարկան պէտք է ըլլայ կամաւորական խմբերու սուտարացումը, զանոնք պարէնաւորելու եւ զինաւորելու դործը։ Երկրորդը կներկայանայ փախստականներու օդնութեան դործը եւ ապա դիւանագիտական աշխատանքները։

Հետեւաբար համերաշխութեան հող կը ներկայացնէ վերը յիշւած անհրաժեշտ պէտքերուն միասնաբար ընդ առաջ երթալու դործը։ Այս կէտերը ճշտելէ վերջ հարկ է ճշտել մեր ըրած օժանդակութեան բաշխումի ձեւը։

Առանց ժխտելու մեր մինչեւ հիմա ընտրած ձեւի նպատակայարմարութիւնը՝ բայց իրրեւ միջին եղբ մը մեր եւ միւս մարմիններու միջեւ եղած ըմբռնումներուն, հետևեալ առաջարկը ձեր լուրջ ու շաղրութեան կյանձնենք։

1) Մեր միասին հանդանակած գումարին մեծագոյն մասը (աւելի քան հարիւրին յիսունը — 50%) յատկացնել կամաւորական շարժումին. իսկ մնացեալ մասը փախստականներու օդնութեան դործին և այլ պէտքերու։

2) Ընդունելով Վեհ. Կաթողիկոսը քա-

ղաքական ներկայ պայմաններու մէջ
ազգային բոլոր գործունէութեանց կեղ-
րոն, դնել մեր օժանդակութիւնները
ամբողջութեամբ անոր տրամադրութեան
տակ, պայմանաւ որ իւրաքանչիւր պէտ-
քի համար զրկւած օժանդակութիւնը մա-
տակարարւի այդ գործին համար կազմը-
ւած մարմնի ձեռքով. օրինակ, կամա-
ւորներու համար զրկւած օժանդակու-
թիւնը մատակարարւի հայ հողի վրա
գործող հայ կամաւորներու գործը զե-
կավարող Ազգային կեղրոնական մարմնի
ձեռամբ. իսկ փախստականներու համար
զրկւած օժանդակութիւնը՝ նոյն պէտ-
քերուն հող տանող մարմնի ձեռամբ:

Յուսալով թէ վերոգրեալ կէտերը ձեր
բոլորի կողմէն ընդունելի ըլլալով՝ պա-
տեհութիւն կունենանք ողջունելու բազ-
մացւած համերաշխութեան հաստատու-
մը,
Կմնանք յարգանօք

Հ . Յ . Դ . ԱՄԵՐ . ԿԵԴ . ԿՈՄԻՏԵ

Արսէն վ . Վեհունի հետեւեալ նամակը
կղրկէ իրը պատասխան մեր պայմանները
ներկայացնող սեպտեմբեր 21ի վերջին նա-
մակին :

Քլիվլենտ, սեպտ. 27, 1915

Յարգելի վարչութիւն

Հ. Յ. Դ. Ամերիկայի Կեդր. Կոմիտէի

Պօսքօն

Եքըընէն վերադառնալով ստացանք
պատ. Կոմիտէիդ սեպտեմբեր 21 թւակի-
րը և անմիջապէս պատճէնը ուղարկե-
ցինք զեր. Տ. Մուշեղ արք.՝ի, մեր կող-
մանէ ներկայացնելու համար «Ազգ-
Պաշտ. Միութեան»:

Սրտի անհուն բերկրութեամբ ձեր նա-
մակէն կզգանք՝ համերաշխութեան մա-
սին ձեր ունեցած տրամադրութիւնը, մի-
այն թէ այնքան ալ նողատակայարմար
չննք գտներ. «Հայրենիք»ի վերջին թւին
մէջ համերաշխութեան բանակցութեանց
հրատարակումը, որը կրնայ հե-
ռաւոր ընթերցողներու մաքին մէջ երկ-
մշտանք առաջ բերել, ուստի պիտի խըն-
դըրէինք, որ հաճէիք եթէ կարելի է յե-
տաձգել և նոր բախ-բառներու դուռ չի
բանուլ:

Կյուսանք, որ փոխադարձ զիջողու-
թիւններով կարելի պիտի ըլլայ վերջնա-
կան հասկացողութեան մը դալ, քանի որ
սկզբունքի տեսակէտով ձեր եւ «Ազգ.

Պաշտ. Միութեան» ըմբռնումին մէջ շատ
սարրերութիւն չկայ:

Երբ ստանանք «Ազգ. Պաշտ. Միութեան» պատասխանը ձեզ կհաղորդենք:

Մնամք աղօքաբարար

ԱՐՄԵՆ Վ. Ե. ՎԵՀՈՒՆԻ

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Մենք ստանալով Վեհունի վրդ.ի նա-
մակը չորս չարաթներ սպասեցինք որոշ
պատասխան մը առնելու համար կամ ա-
ռաջնորդ Վեհունի վրդ.էն, որ նախա-
պահն է «Ազգ. Պաշտ. Միութեան» մարմ-
նին եւ կամ «Ազգ. Պաշտ. Միութիւն»էն:
Բայց որովհետեւ տակաւին ո'չ մէկ տող,
ո'չ մէկ լուր չստացանք ամբողջ չորս
չարթւան ընթացքին, հետեւեալ նամակը
դրկեցինք առաջնորդին:—

Թիւ 234

Պուրօն, հոկտ. 18, 1915

Գեր. Արսեն Վ. Ե. Վեհունի,

Առաջնորդ հայոց Ամերիկայի

Ուստի

Ժամանակին ստացած ենք ձեր սեպտ.
27 թւակիր նամակը, որով կիմացնէիք
թէ ստացած էիք մեր սեպտ. 21 թւակիրն
և անմիջապէս պատճէնն ուղարկած գեր.

Տ. Մուշեղ արք.ին, ձեր կողմէ ներկայացնելու համար «Ազգ. Պաշտ. Միութեան», խոստանալով որ երբ «Ազգ. Պաշտ. Միութեան» պատասխանը ստանաք մեղի կհաղորդէք:

Կիմիավիաքինք ձեր ուշադրութեան յանձնել այն պարագան, որ հակառակ չորս երկար շարաթներու մեր սպասումներուն, գեռ ձեզմէ եւ կամ ձեր նախադահութեան տակ գտնւող վերոյիշեալ մարմբնէն մեր նամակին պատասխանը չստացանք:

Հետեւարար, նկատի ունենալով, որ ներկայ դործի հրամայական օրերուն աւելորդ սպասումներն համապատասխան չեն ոչ ծով կարիքներու հասնելու եւ ոչ ալ բաղձացւած համերաշխութեան տեսակէտէն, կսպասենք, որ ներկայ շարթը լնթացքին հաճիք մեզ իմացնել ձեր որոշ պատասխանը:

Սպասելով ձեր շուտափոյթ պատասխանին,

Յարգանքներով

Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵ

Ահա թէ ի՞նչ կպատասխանէ մեզ Արսէն վրդ. Վեհունի.—

Համար 1093 Ուստի, 20 Հոկտ. 1915
Պատւարժան վարչութիւնն
Հ. Յ. Դ. Ամերիկայի Կեդր. Կոմիտէի
ի Պօստոն

Թեմական այցելութիւններէն երէկ զիւ-
շեր վերադառնալով ստացանք ձեր ամ-
սոյս 18 թւակիր ըսրէջը նամակը:

Աղջային Պաշտպանութեան Ամերիկա-
հայ Միութիւնը իր հոկտեմբեր 4ի նիս-
տին մէջ նկատի առած է ձեր առաջարկը
եւ այդ մասին թէեւ իր ըմբռնումը յայտ-
նած էր մեզ հոկտեմբեր 11 գրութեամբ,
բայց ինդիրը աւելի պարզ եւ որոշ եղբա-
կացութեան մը յանգեցնելու համար յար-
ժար տեսանք, ինչինչ լուսարանութիւն-
ներ տալ մեր կողմանէ Ա. Պ. Ա. Միու-
թեան եւ ըստ այնմ անոնց վերջնական
պատասխանը ձեզ հաղորդել:

Արդ, ըստ որում Միութիւնը այս շաբաթ
ժողով պիտի ունենայ կապահովենք զձեզ
թէ՝ յառաջիկայ շարթու մէջ անոնց պա-
տասխանը ձեզ կհաղորդեմք:

Մնամք աղօթարար
ԱՐՍԷՆ ՎՐԴ. ՎԵՀՈՒՆԻ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Դիտելի է ներկայ նամակէն, որ «Աղջ.
Պաշտ. Միութիւնը» իր առաջին իսկ ժո-

զովին մէջ (Հոկտեմբեր 4) մեր պայմանները պաշտօնապէս նկատի ունեցած է և այդ մասին ալ իր կարծիքը յայտնած առաջնորդին :

Մեզ ծանօթ չէ «Ազգ. Պաշտ. Միութեան» այդ կարծիքը, որու համար առաջնորդը ոչինչ չըսեր, բայց յարժար կը նկատէ լուսարանութիւններ տալ այդ «Միութեան» : Բայց մեզի համար ծանօթ է այն, որ համերաշխական ներկայ հրամայական բանակցութիւնները կղանդադին, որովհետեւ «Միութիւնը» իր որոշ պատասխանը Հոկտեմբեր 4ի ժողովին չի տար ու կյետաձդէ մինչեւ Հոկտեմբեր 23, զրելով հետեւեալ նամակը առաջնորդին, որու պատճէնը առաջնորդը կներփակէ մեզի զրկւած նամակով մը :

Ահա «Ազգ. Պաշտ. Միութեան» նամակին պատճէնը .—

Փառքօն, Հոկտեմբեր 23, 1915
Գերապատիւ

Տ. Արսէն ծ. լ. Վեհունի

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Ռւսոր

Ա. Հայր,

Հոկտեմբեր 20 թւակիր ձեր զրութիւնը ստացած ենք, ուրախ ենք որ Հ. Յ.

Դաշնակցութիւնն ալ սկզբունքով կընդունի կամաւորներու, կարօտեալներու և զիւանաղիտական ձեռնարկներու համար մեր ընելիք գործառնութիւններուն կարեւորութիւնը։ Մեր կարծիքով բաղմացած համերաշխութիւնը գրաւոր բանակցութիւններով կարելի չէ ի զլուխ հանել՝ նկատի ունենալով ներկայ պարագաներուն ստիպողականութիւնը, ուստի լաւաղոյն կերպն է որ Հ. Յ. Դաշնակցութիւնը զրկէ իր երկու լիազօր ներկայացուցիչները, որոնց հետ կարելի ոլիտի ըլլայ համերաշխութեան մասին վերջնական բանակցութիւնները կատարել եւ եղացութեան մը յանգիլ վերջնապէս։

Որդիական յարգանքներով,

(Ստորագրւած դիւանի կողմէ)

Ճիշդ իսկականին համեմատ լինելը կը հաստատեմք,

ԱՐՄԵՆ ՎՐԴ. ՎԵՀՈՒՆԻ

Առաջնորդ Հայոց Ամեիրկայի

Ահա եւ այս պատճէնը պարունակող ուաշնորդին նամակը.—

Համար 1115

Ուստր, 24 հոկտ. 1915

Պատ. Վարչութիւն

Հ. Յ. Դ. Ամերիկայի Կեդր. Կոմիտէի

ի Պուրօն

Աղդ. Պաշտ. Միութիւնը իր ամսոյն
23ի նիստին մէջ տւած որոշման համա-
ձայն իր պատասխանը մեզ հաղորդած լի-
նելով՝ անոր պատճէնը կուղարկենք ձեզ
և մեր կողմանէ եւս կթելադրենք առանց
երկար բարակ թղթակցութիւններով ժա-
մավաճառ ըլլալու հաճիք ձեր լիազօր
ներկայացուցիչները ուղարկել:

Սպասելով ձեր համերաշխութեան մա-
սին առնելիք գործնական քայլին,

Մնամք աղօթաբար
ԱՐՍԷՆ ՎՐԴ. ՎԵՀՈՒԵՐ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Հակառակ անոր որ մենք սկիզբէն ի վեր
սպահանջած էինք որ մեզի տրւին համե-
րաշխութեան համար իրենց ունեցած
ոլայմանները, հակառակ անոր որ յուսա
հատած մեր պնդումներուն վրա եւ ո
ռաջնորդի ոլահանջին վրա թենք մեր պայ-
մանները ներկայացուցինք ու այնքան ել
կար սպասեցինք որոշ պատասխանի
մենք միշտ մտահող համերաշխ գործակ

ցութեան մը եղր գտնելու , առանց երկար
սպասելու , իրր նոր զիջում ստիպւած ե-
ղանք իրենց դրած վերջին պայմանն ալ
ընդունիլ եւ մեր ներկայացուցիչները ըն-
տրել եւ մեր որոշումը իմացնել առաջ-
նորդին հետեւեալ նամակով .—

Թիւ 251 Պօստօն , հոկտ . 28 , 1915

Գեր . Արսէն վրդ . Վեհունի

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Ուստի

Ստացած ենք ձեր հոկտեմբեր 24 թւա-
կիր նամակը եւ ներփակ պատճէնը «Աղդ .
Պաշտ . Միութեան» նամակին , որով
«Միութիւն»ը կխնդրէր երկու լիազօրներ
դրել , առանց որոշապէս ըսելու թէ ինչ
է իր զիրքը մեր այնքան բացորոշ կերպով
դրած պայմաններուն վերաբերմամբ :

Մենք մնալով հանդերձ մեր այն համոզ-
ման մէջ թէ նախքան ներկայացուցիչնե-
րով բանակցիլո՞ւ լաւագոյն կերպն էր է-
ական պայմաններու շուրջ հասկացողու-
թեան մը դալ դրաւոր կերպով , բայց նը-
կատելով որ «Աղդ . Պաշտ . Միութիւն»ը
կտառամսի դրական կամ բացասական
պատասխան մը տալու եւ կուզէ լիազօր-
ներու միջոցով վերջնական հասկացողու-
թեան մը դալ , մենք անզամ մը եւս կը

զիջինք մեր տեսակէտէն, միմիայն համերաշխութեան սիրոյն համար և պատրաստ ենք մեր երկու ներկայացուցիչները դրկելու, պայմանով՝ որ անմիջապէս դադրեցւին առաջիկայ կիրակի օրւան հանգանակութիւնները. որովհետեւ գեռ բանակցութիւնները վերջնական եղբակացութեան մը չյանգած՝ բանակցող ունէ կողմին համար մասնակի հանգանակութիւններու ձեռնարկելը մենք կնկատենք հակահամերաշխական արարք մը :

Ի հարկէ «Միութեան» առաջիկայ նիստին զումարման տեղն ու ժամանակը տաենին կիմացնէք մեզ :

Յարգանիքներով

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵ

ՄԵՐ յիշեալ նամակին առաջնորդը կը ոդատասխանէ :

Ուստի հոկտ. 29, 1915

Պատ. վարչութիւն

Հ. Յ. Դ. ԿՕՋԻՄԵՒ,

ի Պուրօն

Այսօր կէսօրէն յետոյ ժամը երեքին ըստացանք ձեր երէկւան ըսրէշը եւ ապահովադրեալ թիւ 251 զրութիւնը եւ անոր

պատճէնը այսօր իսկ ուղարկեցինք «Ազգ .
Պաշտ . Միութեան», յանձնաբարելով
տնօրինել զարժանն :

Մնամ աղօքարար
ԱՐՄԵՆ Վ . Ե . ՎԵՀՈՒՆԻ
Առաջնորդ հայոց Ամերիկայի

Ինչպէս կերեւի առաջնորդի երկտողէն՝
ան նոյն օրն իսկ մեր նամակի պատճէնը
դրկած է Ազգ . Պաշտ . Միութեան :

Հակառակ այն իրականութեան որ բու-
լորը զիտէին թէ անցեալ համերաշխու-
թեան բանակցութիւններու օրերուն կեղ .
Կօմիտէս վերջին վայրկեանին, շաբաթ
գիշերն իսկ հեռադրերով դադրեցնել տը-
ռած էր յաջորդ օրը (կիրակի) տեղի ունե-
նալիք 10—12 մեր հանգանակային ժողով-
ները, տեղի չտալու համար հակահամե-
րաշխական ոււէ քայլի, «Ազգ . Պաշտ .
Միութիւն»ը, «չ միայն նկատի չառաւ
մեր պայմանը—իր 2-3 քաղաքներու ան-
ջատ հանգանակային ժողովները դադրե-
ցընել մինչև բանակցութիւններու վերջը
—այլ նոյնիսկ թոյլ տւաւ անցեալ կիրակի
օր Պօմթօնի մէջ իր հանգանակային ժո-
ղովին մէջ «Ազգ . Պաշտ . Միութեան»
կեղը . յանձ .ի մէկ անդամին, Մուշեղ ե-
պիս .ի բերանով Դաշնակցութեան հաս-

ցէին ամենաազտոտ բառեր արձակել :

Կեղը . կօմիտէս այս հակահամերաշխաւ-
կան արարքը նկատի առնելով՝ հետեւեալ
երկողով՝ «Ազգ . Պաշտ . Միութեան»
դրկւած նամակին պատճէնը դրկեց Արսէն
վարդապետին :

Թիւ 261

Նոյեմ . 1 , 1915

Գեր . Արսէն Վ . Ե . Վեհունի

Առաջնորդ հայոց Ամերիկայի

Ռւստր

Զեր 1150 թւահամար նամակը ստացած
Էնք , բայց համերաշխական մեր բանակ-
ցութիւններու ներկայ փուլին մէջ «Ազգ .
Պաշտ . Միութեան» կեղը . յանձնախմբի
մէկ անդամի արտայայտութիւնները , ինչ
պէս կտեսնեի այդ մարմնին ուղղւած հե-
տեւեալ պատճէնէն , ամենաքիչը զարմանք
առթած է մեզ :

Թիւ 260

նոյ . 1 1915

«Ազգ . Պատր . Միութեան» ,

Յարգելի հայրենակիցներ ,

Մեր վերջին նամակով՝ ուղղւած Առաջ-
նորդին , իրեւ ձեր Միութեան նախազա-
հին , մենք պատասխանելով ձեր մեզմէ
լիազօրներ ուղելու առաջարկին , կխոստա-
նայինք մեր ներկայացուցիչները դրկել ,

պայմանով որ մասնակի հանգանակութիւն
ները դադրեցւին մինչեւ որ համերաշխա-
կան բանակցութիւնները վերջնական եղ-
րակացութեան մը յանդին :

Հակառակ մեր այս տարրական եւ ար-
դար պահանջին՝ անցեալ կիրակի դուք
թոյլ տւիք որ հանգանակային՝ ժողովներ
տեղի ունենան Պօսթօնի եւ Պրիճռոթրի
մէջ : Ոչ միայն այդ չափ այլ Մուշեղ Եպիս-
կոպոսը, ձեր Միութեան կեղրոնական
յանձնախմբի անդամներէն մէկը, ինք-
ոյնքին թոյլ տւած է Պօսթօնի ժողովին
մէջ հրապարակով Դաշնակցականները
«որիկաններ» եւ «ոինլքորներ» անւանել,
պատրւակ բոնելով տեղային կօմիտէի
շատ քաղաքավարի եւ պատշաճ լեզով
դրւած մէկ կոչը, որմէ օրինակ մը ներ-
փակ պիտի դանէք :

Արդ պիտի խնդրէինք որ բարի ըլլայիք
ըսել մեղ թէ ինչպէ՞ս կարդարացնէք այս
մասնակի հանդանակութիւնները նախ
քան մեր վերջնական հասկացողութեան մը
դալը : Յետոյ դուք կրաժնէ՞ք ձեր յիշեալ
անդամին Պօսթօնի ժողովին մէջ ըրած
յայտարարութիւնները :

ՄԵնք կցառինք ըսելու որ մինչեւ այս
խնդիրներու մասին ձեր կարծիքը լսելը

մԵնք չպիտի կրնանք մեր ներկայացու
զրկել համերաշխութեան էական պայմա-
ներու մասին բանակցելու համար :

Այս նամակի պատասխանին կոպասենք
ամենառաջը մինչեւ առաջիկայ երկուշար-
թի, նոյեմբեր 8ը :

Յարգանքներով

Հ. Ց. Դ. ԱՄԵՐԻԿ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵ

Ահա եւ նամակին մէջ ակնարկւած Պօո-
թօնի կօմիտէի կոչը :

Հայրենակիցներ,

Համազգային այս աղէտի եւ սուդի օրե-
րուն, երբ ամրող թրքահայութիւնը իր
բնաջնջման ճամրուն մէջ կզտնւի, մԵնք՝
մէկ բեկորն այդ հայութեան՝ պարտաւոր
ենք համախմբել մեր բոլոր համեստ մի-
ջոցները եւ հրազդարակ գալ մէկ ճակատի
վրա՝ մէկ կամքով եւ հոգւով, որպէսզի
մեր օժանդակութիւնը ըլլայ պատկառելի
եւ բոլէի պահանջին համապատասխան :

Ռերախալի է դիտել որ արդէն գաղու-
թիս մէջ կտիրէ այդ բարերար գիտակցու-
թիւնը եւ ընդհանուր պահանջ մը կայ հա-
մազաղութային համերաշխութեան մը
համար : Գոհունակութեամբ կդիտենք
զարձեալ որ համերաշխական բանակցու-

թիւնները արդէն մտած են յուսալից փու-
յի մը մէջ :

Մէր խորին համողումով այս փափուկ
բոսկին մէջ ուեւէ հոսանքի կամ հոսանք-
ներու կողմէ հանգանակութեան ձեռնար-
կելլը պիտի նշանակէ պաղ ջուր լեցնել հա-
մերաշխական այնքան տաք տրամադրու-
թիւններուն վրա : Աւստի իրրեւ անկեղծ
համերաշխականներ , մէնք ձեր վրա բա-
րոյական պարտաւորութիւն կղնենք յե-
տաձգել ձեր նւէրները մինչեւ որ համե-
րաշխական բանակցութիւնները յանդին
վերջնական եզրակացութեան մը : Դուք
իրրեւ զիտակից հայրենակիցներ պարտա-
ւոր էք նաև պահանջել հանգանակային
ժողով սարքող հոսանքներէ որ յետաձգեն
իրենց հանգանակային ժողովները մինչեւ
որ զոյանայ ամէնուս ցանկացած համե-
րաշխութիւնը եւ կամ մինչեւ որ վերջնա-
կան հասկացողութեան մը յանդին բանակ-
ցութիւնները :

Հ . Յ . ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՊՈՄԹՕՆԻ ԿՈՄԻՏԵ

Պօսթօն , Հոկտ . 27 , 1915

Մէր այդ նամակին առաջնորդը կպատու-
խանէ հետեւեալ երկտողով .—

Համար 1179

Ուստր 2 նոյեմբ.

Պատւարժան վարչութիւն

Հ. Յ. Դ. Կ. Կօմիտէի,

ի Պօքօն

Այսօր ճիշդ կէսօրին ստացանք պատ.
կօմիտէիդ Երէկւան թւակիր 261 զրու-
թիւնը եւ անմիջապէս պատճէնը ուղար-
կեցինք «Ազգ. Պաշտոն. Միութեան» :

Մնամք ողջունիւ սիրոյ եւ օրհնութեան

ԱՐՄԵՆ Վ. Ե. ՎԵՀՈՒԻՆԻ

Առաջնորդ հայոց Ամերիկայի

Պօսթօնի այս դէպքերէն վերջն է միայն
որ Առաջնորդէն կստանանք հետեւեալ նա-
մակը :

Համար 1181 Ուստր, նոյ. 3, 1915

Պատ. վարչութիւն

Հ. Յ. Դ. Կ. Ամեր. Կ. Կօմիտէի

ի Պօքօն

Կ. Կօմիտէիդ 28 Հոկ. զրութեան ի պա-
տասխան ստացած ենք «Ազգ. Պաշտ. Մի-
ութեան» կողմանէ Հոկտ. 30 թւակիր մի
զրութիւն, որը միայն այսօր ձեռքբերնիս
հասած լինելով ներփակ կուղարկենք ձեզ
անոր պատճէնը :

Քաղցր է մեզ յուսալ որ՝ յանուն բաղ-
ձացեալ համերաշխութեան՝ մէկ կողմ

թողլով կողմնակի խնդիրները կուղարկէք
ձեր ներկայացուցիչները և այդ կերպով
վերջ կդրւին վայրելեանին անհամապա-
տասխան անտեղութեանց :

Միամբ աղօքարար
ԱՐՍԵՆ Վ. Ե. ՎԵՀՈՒՆԻ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Ահա եւ Ազգ . Պաշտ . Միութեան պա-
տասխանը , որ ներփակւած էր Առաջնոր-
դին վերոյիշեալ նամակին մէջ :

(Պատճեն)

Պուրօն , Մէս . Հոկտ . 30 , 1915
Դեր . Արսէն Վ. Ե. Վեհունի ,
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Սրբազն հայր ,
Ստացանք ժողովիս ներկայացուցւած
Դաշնակցութեան ամսոյս 28 թւակիր նա-
մակը :

Մեր հրահանգով տեղական մասնաճիւ-
ղերուն կողմէ սարքւած հանդանակու-
թեանց հրապարակային ժողովները անյե-
տաձելի են , եւ ունէ կապ չունին համե-
րաշխութեան բանակցութիւններուն հետ ,
անոնք ըլլալով համազգային :

Մեր ժողովը պիտի գումարւի նոյեմբեր
6 շաբաթ օրը ժամը երկուքին մէր պաշ-

տօնառեղին Օլտ սառւրհ պիլտինկ, թում
323 : Հետեւարար նոյն օրը կրնան իրենց
լիազօր ներկայացուցիչներ դրկել խոր-
չրրդակցելու համար մեզի հետ :

Յարգանիներով

Միութեան կողմէ

ՄԻՀՐԱՆ ՍՎԱԶԼԵԱՆ

«Միութեան պատասխանը, ինչպէս կը
տեսնի, վճռական է Եւ «Հեղինակաւոր» :
Հանգանակութիւնները «համազգային»
են եւ «անյետաձգելի» : Եւ այս այլամերժ
ընթացքին կհետեւին մարդիկ որ չեն դա-
դարիր մամուլով եւ բեմերէ քարոզելէ՝
թէ համերաշխութիւնը պէտք է դոյանոյ
ամէն զնով և զոհողութեամբ : Անոնք կը
պահանջէին որ մենք զիջինք մեր տեսա-
կէտներէն համերաշխութեան սիրոյն հա-
մար : Մենք զոհեցինք զրեթէ մեր բոլոր
տեսակէտները, բայց մեր «համերաշխա-
սէր» պարոնները չեն յօժարիր իրենց մաս-
նակի հանգանակութիւնները յետաձգել
զոնէ քանի մը օրւան կամ շարթւան հա-
մար : Հիանալի չէ՞ք զոններ զոհողու-
թեան եւ համերաշխութեան այս ողին :

Ահա վերջապէս «Ազգ . Պաշտ . Միու-
թեան» պատասխանը մեր վերը յիշած
նոյնամբեր և թւակիր նամակին :

Պուրօն, Նոյ. 6, 1915

Հ. Յ. Դաշնակցութեան

Կեդր. Կոմիտէին

Պուրօն

Յարդելի Հայրենակիցներ,

Ստացանք ձեր նոյեմբեր 1, 1915 թիւ
նամակը և Միութիւնս նկատի առաւ
պայն: Ի պատասխան կյայտնենք թէ ձեր
լիազօր պատւիրակները զրկէք, որպէսզի
մշակւին Համերաշխութեան վերաբերեալ
բոլոր խնդիրները: Թէպէտեւ Միութիւնս
գորաւոր պատճառներ ունի զժզոհ մնա-
լու այն անտեղի յարձակումներէն, որոնք
ձեր օրկանին, ատենախօսներուն եւ կու-
սակցութեան կողմէ Գեր. Առաջնորդ հօր,
Միութեանս եւ Հայ Հայրենասէրներու
զէմ տեղի կունենան ամիսներէ ի վեր եւ
վերջին բանակցութիւններու ընթացքին
իսկ եւ որոնք Համերաշխութեան ոգւոյն
Հակառակ են, այսուամենայնիւ նկատի
առնելով նորական նպատակը ընդհա-
նուր եղբայրական Համագործակցու-
թեան, Միութիւնս կանունէ զանոնք եւ
միշտ յօժար ու պատրաստ է ընդունիլ
ձեր լիազօրները եւ բանակցիլ անոնց
Հետ:

Կանխառ ձեր պատասխանը Հաղորդե-

ցէք, որպէսզի ըստ այնմ որոշենք ժողովին օրը:

Յարգանիքներով
և դիմաց Ազգ. Պատ. Միութեան Ամեր.
(Դիւանի ստորագրութիւն)

Ուսումնական ըլլալու ոլէտք չկայ տեսնելու համար թէ այս նամակը մեր նամակին պատասխանը չէ: Ան մեր դրած հարցերը չչօշափեր իսկ, այլ վրան բաց աճապարարութիւնով մը եւ կարգ մը անտեղի ակնարկութիւններէ վերջ՝ կրկին կոչ կրնէ մեզի որ մեր «լիազօր պատիրակներ»ը դրկենք: Ահա եւ մեր պատասխանը այս նամակին:

Եիւ 268 Պուրօն, Մէս. Նոյ. 10, 1915

Յարգելի հայրենակիցներ,

Ստացած ենք ձեր նոյ. 6 թւակիր նամակը, որ դժբաղդաբար ոււէ պատասխան չէր պարունակեր մեր վերջին նամակով դրած հարցերուն:

Մենք մեր նոյեմբեր 1 թւակիր նամակով կպահանջէինք ձեզմէ որ մասնակի հանդանակութիւնները դադրեցւին մինչեւ որ համերաշխական բանակցութիւնները վերջնական եզրակացութեան մը յանդին: Անցեալ տարի «Ազգ. Պաշտ.

Յանձնախումբը միեւնոյն պահանջը դրսծ էր մեղի ու մենք վերջին բոպէին հեռագրով դադրեցուցինք մեր աւելի քան 10 հանդանակային ժողովները։ Դուք, սակայն, այս տարի աննկատ թողելով մեր միեւնոյն արդար պահանջը՝ ոչ միայն հանդանակային ժողովներ սարքեցիք Պօսթօնի, Ուէստ Հոպօքընի եւ Պրիճուօթըրի մէջ, այլ թոյլ աւիք որ ձեր Միութեան անդամներէն Մուշեղ Եպիսոր ամէն անորակելի հայհոյանք թափէ մեր հասցէին Պօսթօնի ժողովի բեմէն։

Մենք մեր վերջին նամակով (նոյ. 1) կուհանջէինք ձեզմէ որ բարի ըլլայիք ըսել մեզ թէ ի՞նչպէս կարդարացնէք ձեր ժամանակի հանդանակութիւնները շարունակելու քաղաքականութիւնը, երբ զեռ բանակցութիւնները չեն վերջացած և ինչպէ՞ս կրացատրէք ձեր յիշեալ անդամին անվայել ընթացքը։ Դուք ձեր նախավերջին նամակով (հոկտ. 30) կուզաք յայտարարելու թէ ձեր հանդանակութիւնները «անյետաձգելի» են. իսկ ձեր յիշեալ անդամին դատապարտելի արարքին մասին ոչինչ չէք ըսեր։

Համազգային այս աննախընթաց աղէտի օրերուն դադութիս զանազան հո-

սանքներուն մէջ համագործակցութիւն
մը առաջ բերելու համար՝ մենք մեր տե-
սակէտներէն ամէն կարելի զոհողութիւն
եւ զիջողութիւն ըրինք :

Ամրող տարի մը Ազգային Բիւ-
րօին իրրեւ մէկ մասնաճիւղը գործելէ և
մեր ամրող օժանդակութիւնը անոր տը-
րամադրելէ վերջ, այսօր, երբ յիշեալ
մարմնի չուրջ յարուցւած անցեալ տար-
ւան թիւրիմացութիւնները պարզւած են
եւ մենք աւելի կուան ունէինք անոր վրա
պնդելու, միմիայն ընդդիմադիր հոսանք-
ներու գոհացում տռած ըլլալու եւ համե-
րաշխութեան ճամրան հարթելու համար
մենք մէկդի դրինք մեր տեսակէտը այդ
մասին եւ առաջարկ բերինք բոլորւիլ կա-
թողիկոսին չուրջ :

Յետոյ՝ խրատւած անցեալ տարւան
դադտնի եւ բերանացի բանակցութիւնե-
րու տռած տղեղ արդիւնքէն՝ մենք այս
տարի առաջարկ բերինք որ համերաշխու-
թեան էական սպայմանները գծւին հրա-
պարակով եւ գրաւոր կերպով, բայց գուք
մինչեւ վերջը պնդեցիք լիազօրներու մի-
ջոցով բանակցելու ձեր տեսակէտին վրա :
Մենք համերաշխութեան սիրոյն համար
այդ կէտին մէջ ալ տեղի տւինք, պահան-

չելով միայն որ երկուստեք մասնակի հանգանակութիւններ տեղի չունենան մինչեւ որ վերջնական հասկացողութեան ժը դանք : Իսկ զուք քարեկօրին կերպով կյայտաբարէք թէ ձեր հանգանակութիւնները «անյետաձզելի» են, ինչ որ կը անակէ թէ համերաշխութեան բաղձացող եւ անոր համար ուեւէ զոհողութիւնընելու տրամադիր չէք :

Մենք տակաւին կմնանք այն խոր համոզման մէջ որ ազգային այս մեծ ձգնաժամին մէջ ամերիկահայութիւնը, ինչպէս ամէն հայ գաղութ, պարտաւոր էր զործել միակամ, միասիրոտ եւ միահոգի : Այդ կողահանջէր բոպէի լրջութիւնը : Այս զիտակցութեան գործնական ապացոյցը, թոյլ տւէք մեզ ըսել, չկրցանք զտնել ձեզ մօտ մեր երկարաձիգ բանակցութիւններէն վերջ :

Յարգանքներով
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՄԵՐԻ. ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԵ

Ամփոփենք :

Առաջնորդը «զզածւած» օրւոն աղեխարչ դէպքերէն՝ կեղը. Կօմիտէին կդիմէ որ ան «Ազգ. Պաշտ. Յանձնականը»—որուն վերջերը միացան Բողոքա

կանները եւ փաշայականները եւս եւ ա-
նունը փոխեցին «Ազգ . Պաշտ . Միտթիւն» —
Հետ հասկացողութեան մը դայ : Կեղ-
րոնական Կօմիտէն կիսնդրէ առաջնորդէն ,
որ ինք կամ իր նախագահութեան տակ
դանւած յանձնախումբը յայտնէ համե-
րաշխութեան համար իրենց էական նեաւ-
տած պայմանները , որպէսզի անոր համա-
ծայն ինք իր դիրքը ճշգէ : Առաջնորդը
կթելադրէ որ համերաշխութեան բոլոր
պայմանները գծւին լիազօրներու միջու-
ցով եւ դադտնի : Կեղր . Կօմիտէն անցեալ
տարւան դադտնի եւ բերանացի բանակ-
ցութիւններու տւած տգեղ արդիւնքէն
խրատւած՝ կանդէ որ համերաշխութեան
դոնէ էական պայմանները գծւին հրասա-
րակով եւ դրաւոր կերպով : Առաջնորդը
վերջապէս կընդունի կեղր . Կօմիտէի տե-
սակէտի բանաւորութիւնը , բայց ինք խու-
սափելով ունէ պայման առաջարկելէ՝ կը
խնդրէ որ կեղր . Կօմիտէն առաջարկէ իր
պայմանները : Կեղր . Կօմիտէն , առանց
նկատի ունենալու որ նախ իրենք պարտա-
ռոր էին իրենց պայմանները յայտնելու ,
քանի որ իրենք էին որ առաջին կոչը դր-
կեցին , դրաւոր կերպով կներկայացնէ իր
պայմանները , որոնց համաձայն հանդա-

նակութիւններու ամբողջ արդիւնքը պիտի
տրամադրւէր վեհ . Կաթողիկոսին՝ ոչ նը-
ւազ քան կէսը կամաւորներուն՝ մնացած
կէսն ալ փախստականներու և դիւանա-
դիտութեան յատկացւելու համար՝ պատ-
կան մարմիններու ձեռքով :

Առարկողներ ըլլան գուցէ որ եթէ կեղը .
Կօմիտէն բացարձակապէս կվստահէր կա-
թողիկոսին , ինչո՞ւ պայման կղնէ որ կա-
թողիկոսը իր ստացած գումարները նշա-
նակւած նպատակներուն համար գործա-
ծէ պատկան մարմիններու ձեռքով : Բ-
անմք անմիջապէս որ այդպիսի պայման մը
ուեւէ անվստահութիւն չպարունակեր կա-
թողիկոսի հանդէս , քանի որ ուեւէ մար-
մին յականէ անւանէ յիշած չէ , այլ կա-
թողիկոսին դատողութեանը թողւած է
որոշելու թէ որոնք են այդ մարմինները :
Եթէ իր հովանաւորութիւնն ու վստահու-
թիւնը վայելող նման մարմիններ չկան ,
կաթողիկոսը բնականարար դրամը չյանձ
ներ անոնց :

Ամբողջ տարի մը Ազգային Բիւրօի իր-
բեւ մէկ մասնաճիւղը գործելէ , իր բո-
լոր օժանդակութիւնը , նոյնիսկ կռսակցա-
կան տուրքերը անոր տրամադրելէ վերջ ,
կեղը . Կօմիտէն միմիայն սա պատակառ-

ւած զաղութը համերաշխած տեսնելու
բաղձանքէն մղւած՝ մէկդի կղնէ Աղղային
Բիւրօն և առաջարկ կրերէ բոլորւիլ Կա-
թողիկոսի շուրջ՝ մտածելով որ ոչ ոք
կրնայ առարկել այդ բանաձեւին։ Կեղը·
Կօմիտէի այս զոհողութիւնը աւելի կշեշ-
տը երբ նկատի ունենանք որ անոր ոտ-
քին տակի գետինը այս տարի շատ աւելի
ամուր էր։ Անցեալ տարի կառարկւէր թէ
Աղղային Բիւրօն նշանակովի կաղմւած
մարմին մըն է, թէ ան հաշւետութիւն չի
ըներ եւայլն։ Մինչդեռ այս տարի այդ
բոլոր առարկութիւնները ջուր ինկած են,
որովհետեւ այլեւս մարդ չկայ որ չզիտ-
նայ թէ ան ընտրւած է ամրող մէկ ուկէս
միլիօն ժողովրդի կողմէ և սլարերա-
րար տեղեկագիր եւ հաշիւ կներկայացնէ
Կաթողիկոսին, իրողութիւն մը, զոր ար-
ձանագրեցին Բիւրօի ամենակատաղի հա-
կառակորդ թերթերն անդամ։ Կեղը·
Կօմիտէն իրենց իսկ խնդրանքին վրա իր
սկայմանները զբաւորապէս ներկայացնելէ
վերջ կսպասէր բնականաբար որ «Աղդ·
Պաշտ. Միութիւն»ն ալ զբաւորապէս
յայտնէր թէ կընդունէր զանոնք եւ կամ
ինք իր սկայմանները առաջարկէր եթէ չէր
ընդուներ։ Ան, սակայն, ոչ մէկը ըրաւ,

ոչ միւսը . այլ բաւականացաւ կրկնելով իր
հին յանկերդը .— Եթէ կուզեն համերաշ-
խիլ լիազօրներ թող զրկեն : Կեզր . Կօմի-
տէն հակառակ համերաշխութեան էական
պայմանները գրաւոր կերպով գծելու իր
նախկին պայմանին՝ կրկին տեղի տւաւ եւ
ընտրեց իր ներկայացուցիչները , որպէս-
զի իր կողմէն համերաշխութեան յաջո-
ղութեան ամենասղափիկ մնասն ալ պատ-
ճառած չըլլայ : «Ազգ . Պաշտ . Միութիւ-
նը» , սակայն , դեռ Դաշնակցական ներկա-
յացուցիչներու հետ ունէ նիստ չունեցած
եւ սուանց կարեւորութիւն տալու կեզր .
Կօմիտէի մասնակի հանգանակութիւննե-
րը յետաձգելու առաջարկին՝ ոչ միայն
ձեռնարկեց իր հանգանակային ժողով-
ներուն , յայտաբարելով թէ անոնք «հա-
մազգային եւ անյետաձգելի» են , այլ
թոյլ տւաւ որ իր անդամները ամէն ցեխ
նետեն Դաշնակցութեան հասցէին՝ իր
պաշտօնական ժողովներու բնմերէն :

«Ազգ . Պաշտ . Միութիւնը որքան որ ալ
կեզր . Կօմիտէի հետ ունեցած իր բանակ-
ցութիւններու բնթացքին խուսափեցաւ
համերաշխութեան իր պայմանները հրա-
ողաբակելէ՝ բայց իր պաշտօնական մէկ
կոչին մէջ գիտակցաբար թէ անդիտակցա-

բար իր գլխաւոր պայմանը յայտարարեց հասարակութեան : Ահա «Միութեան» յիշեալ կոչին խնդրոյ առարկայ մասը .—

«Մասնաճիւղերը կեզրոնի գիտութեամբ եւ հրահանգով հանգանակութեան պիտի ձեռնարկեն ի նպաստ Ազգային Շահերու Պաշտ . Հիմնադրամին , զոր հաստատած է ազգային պատւիրակութեան պետը , վրամբ . Պօղոս փաշա Նուլար , ընդհովանաւորութեամբ Ամենայն Հայոց վեհ . Հայրապետին» :

Մենք շարունակ ըստած ենք եւ կկրկնենք թէ Պօղոս փաշան վստահելի եւ ձեռնհաս անձնաւորութիւն մըն է : Հայրապետը անկէ աւելի յարմարագոյնը չէր կրնար դտնել դիւանագիտական դիմումներու փափուկ պաշտօնը վարելու համար : Այս մասին Հ . Յ . Դաշնակցութեան եւ իր հակառակորդներու միջեւ կարծիքի ուեւէ տարբերութիւն դոյութիւն չունի : Դաշնակցութիւնը ոչ միայն ուեւէ դժւարութիւն չէ յարուցած փաշայի դիւանագիտական քայլերուն առջեւ , այլ անոր ամենէն աւելի օգնողը ինք եղած է : 1912—1913-ի դիւանագիտական դիմումներու ընթացքին Պօղոս փաշայի ոչ պաշտօնական ամենամօտիկ գործակիցներն էին Վարանդ .

Էսն, Ահարոնեան եւ ուրիշ Դաշնակցական
յայտնի դէմքեր :

Ինչ որ մեզ համար բոլորովին անըմ-
րըոնելի, հակատրամարանական եւ մնա-
սակար կթւի սա է . ինչո՞ւ կամաւորներու
եւ փախստականներու համար հանդանակ
ւած դրամը պիտի զրկւի փաշային : Մի՞-
թէ բուն գործին վայրը, Կովկասի մէջ,
համառատասխան մարմիններ գոյութիւն
չունին : Պահ մը մէկդի թողունք Ազգա-
յին Բիւրօն, քանի որ ան իրենցմէ ոմանց
համար առարկելի է . բայց մի՞թէ «Ազգ-
Պաշտ. Միութեան» անդամները կրնան
անդիտանալ որ փախստականներու հոգա-
տարութեան համար կեղրոնական մար-
մին մը զոյութիւն ունի էջմիածնի մէջ,
«Եղրայրական Օգնութեան Յանձնաժո-
ղով»ը, ուղղակի կաթողիկոսի վերհսկո-
ղութեան տակ, ուր ներկայացուցիչներ
ունին թիֆլիսի Կեղր . Կօմիտէն, Կովկա-
սահայ Բարեղործականը, Նպաստից Յանձ-
նաժողովը եւ նոյն նպատակը հետապրն-
դող բոլոր կազմակերպութիւնները : Ին-
չո՞ւ, ուրեմն, փախստականներու յատ-
կացւելիք դրամը չզրկւէր ուղղակի այդ
մարմնին :

Ենթադրենք վայրկեան մը մեր հակա-

ռակորդներուն հետ որ Կովկասի մէջ կամաւորական շարժումը ղեկավարող կեղրոնական մարմին մը գոյութիւն չունի, այդ պատճառո մըն է արդեօք որ Կովկասնեան սահմանի վրա կուող կամաւորներու յատկացւելիք նպաստը զրկւի Փարիզի եւ կամ Լոնտօնի մէջ բնակող անձնաւորութեան մը, որ արդէն ծանրապէս բեռնաւորւած է ուրիշ հոգերով եւ որուն այդ կարգի խնդիրներուն մէջ ունեցած ձեռքն հասութիւնը առնւազն խնդրական է: Եթէ իսկապէս կամաւորներու գործը ղեկավարող կեղր՝ մարմին մը գոյութիւն չունի, ինչ որ մեզ համար ծիծաղելի ենթադրութիւն մըն է, ինչո՞ւ կամաւորական շարժման յատկացւելիք նպաստը դոնէ չղրկւի ուղղակի կաթողիկոսին, որ պատկան մարմիններուն յանձնէ: Ինչո՞ւ վերջապէս «Ազգ» . Պաշտ. Միութիւն»ը այսքան յամառօրէն կառչած մնայ Պօղոս փաշա Նուպարի, երբ կեղր . Կոմիտէն մէկդի դնելով Ազգային Բիւրօն՝ առաջարկ բերաւ բոլորուիլ կաթողիկոսին շուրջ: Իրենք չէին որ ամբողջ տարի մը շարամտօրէն զրեցին եւ պօռացին թէ Դաշնակցութիւնը չը վստահիր կաթողիկոսին, թէ իրենք անցւալ տարի առաջարկեցին կաթողիկոսի

շուրջ համերաշխիլ, բայց կեղը . Կօմիտէն
չընդունեց եւայլն : Այժմ կեղը . Կօմիտէն
ինքն էր որ, ոչ թէ զաղտնի անկիւններու
մէջ, այլ հրապարակով եւ գրաւոր կեր-
պով առաջարկ կղնէր բոլորուիլ կաթողի-
կոսի շուրջ, մեր բոլոր օժանդակութիւնը
որամադրել անոր : Ո՞ւր էին, ուրեմն,
երէկի «կաթողիկոսաէ» ըները . ո՞ւր էր
մանաւանդ կաթողիկոսի պաշտօնական
ներկայացուցիչը ինք : Առաջնորդը ինչ-
պէ՞ս կրնայ թոյլատրել որ կաթողիկոսի
անունով հանդանակւած զումարները զըր
կրւին Պօղոս փաշայի կամ ուրիշ ուեէ ան-
հատի կամ մարմնի : Ճիշտ է որ կաթո-
ղիկոսը թոյլ տւած է Պօղոս փաշայի հան-
դանակւթիւն բանալու, ան շատ մը ու-
րիշ մարմիններու ալ նոյն արտօնութիւնը
տւած է, բայց այդ երրէք չնշանակեր որ
փախստականներու եւ կամաւորներու հա-
մար բացւած, մանաւանդ ուղղակի կա-
թողիկոսի անունով հանդանակւած զու-
մարները կրնան զրկւիլ ուրիշ հաստատու-
թեան մը, մանաւանդ անհատի մը : Ե-
թէ այդպէս չըլլար կաթողիկոսը կոնդա-
կով չէ՞ր յայտարարեր թէ իրեն զրամ
դրկելու պէտք չկայ, իր ներկայացուցիչը
Պօղոս փաշան է եւ զրամական բոլոր ա-

ուաքումները պէտք է ըլլան անոր հասցեին : Կա՞յ այնպիսի կոնդակ մը : Ոչ միայն այդպիսի կոնդակ չկայ, այլ կաթողիկոսը մէկէ աւելի անգամներու կոչ ուղղած է որ փախստականներու յատկացւելիք նրապատճները ուղղակի իրեն զրկւին :

Իրերու այս դրութեան մէջ տրամաբանական անխախտելի կանոնները կմղեն մեզ եղրականացնելու թէ «Ազգ . Պաշտ . Միութիւն»ը իր մեծամասնութեանը մէջ չվստահիր կաթողիկոսին : Եւ այս սոսկ տրամաբանական մակարերութիւն մը չէ . արդէն իրենք ալ կիսուսովանին այդ, ինչպէս ցոյց կուտայ իրենց խմբագիրներէն մէկուն մեր խմբագիրներէն մէկուն ըրած առ յայտաբարութիւնը . «Ա.ԶԳ. ՊԱՇՏ . ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿՆԱԽԸՆՏՐԵԼ ԻՐ ՆՊԱՍՏԸ ՏՐԱՄԱԴՐԵԼ ՊՈՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐԻՆ , ԱՐՈՎՀԵՏԵՒ ԿՎԱԽՆԱՅ ԹԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՈՒՆ ԿԱՄ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ՏԱԿՆ կ :»

Աւելի սարսափելին կայ :

Այսօր այլեւս բաց գաղտնիք մըն է որ «Ազգ . Պաշտ . Միութիւն»ը, դոնէ իր բազ կացուցիչ տարրերու մեծամասնութիւնը, ոչ միայն չվստահիր կաթողիկոսին այլ և չվստահիր ամբողջ կովկասահայութեան :

Անոնց նշանաբանն է .— թրքահայերու
դատին զեկավարութիւնը սկսոք է գտնուի
թրքահայերու ձեռքը : Եւ նոր չէ այս բո-
լորզունքը : Արփիար Արփիարեանն էր որ
հրապարակ գրաւ այդ գժրաղդ վարդապե-
տութիւնը եւ թրքահայկական որոշ հո-
սանք մը ժամանակին թէ անժամանակ կը
յեղյեղէ զայն , ամէն անգամ որ մեր ցա-
ւոտ հարցը հրապարակ կելլէ : Առուս թրք-
քական ներկայ պատերազմի բոնկումէն ի
վեր երբ Ազգային Բիւրօն կազմեց հայկա-
կան կամաւորական անջատ զնդեր , մեր
ազատագրութեան սուրբ դատին համար ,
Եղիսկտոսէն մինչեւ Ամերիկա գտնուեցան
հայ թերթեր եւ «ազգային գործիչներ» ,
որ «սրբազն պարտականութիւն» համա-
րեցին կրկնել այդ տիսմար յանկերգը , ե-
թէ ոչ հրապարակի վրա , մոթ անկիւն-
ներու մէջ :

Հասկանալի է , ուրեմն , թէ ինչո՞ւ որոշ
տարրեր ուխտած են հակառակիլ Ազգա-
յին Բիւրօին , հակառակիլ Կաթողիկոսին ,
անտեսել Եղբայրական Օգնութեան Յանձ-
նաժողովը եւ նման կովկասահայ բարե-
գործական հաստատութիւններն և կառչի
Շօղոս փաշային : Այդպէսով անսնք կու-
զեն ստեղծել նոր մարմին մը , որ կազմը

ւած ըլլայ թրքահայերէն և ուր ամերիկահայութիւնը լայն մասնակցութիւն ունենայ : Ամերիկահայութեան մասնակցութիւնը ազգային կեղր . մարմիններու մէջ — ահա խարուսիկ միրաժը , որուն ետեւէն միամտօրէն , կվազեն ասդրատլանտան թրքահայ ամտաւորականներէն ումանք : Եւ այս բոլորը տեղի կունենան համերաշխութեան դիմակին տակ :

Եթէ սովորական պայմաններու տակ կովկասահայու եւ թրքահայու միջեւ խըս բութիւն գնել յանցանք էր , ազգային ներկայ աննախընթաց ճգնաժամին մէջ այդպիսի արարք մը անքաւելի ոճրագործութիւն է ազգային դատին զէմ եւ աններելի ապերախտութիւն՝ մեր այն հատւածին հանդէպ , որ անխնայօրէն դոհարերեր է մեր դատին համար իր միտքն ու տաղանդը , Փիզիքականն ու նիւթականը :

Կոխը կմղւի կովկասեան սահմանին վրա , մեր հարիւր հաղարաւոր փախստականները աղաստանած են կովկաս , թէ փախստականներու եւ թէ կամաւորներու նպաստի մեծագոյն մասը կհայթայթէ ինքը կովկասահայութիւնը : Այս պայմաններուն տակ բնականարար դործերու զեկավարութիւնն ալ պիտի դտնւի իրենց

ձեռքը : Ամերիկահայութիւնը , Եղիպտահայութիւնը , պալքանահայութիւնը եւ ուրիշ ոեւէ հայ գաղութ պարտաւոր է առանց իրաւասութեան խնդիր յարուցանելու , առանց զրադելու բիւզանդական ճրդճիմ վէճերով՝ օգնել կովկասահայութեան հոյակապ ժեսթերուն : Համեստ ըլլանք ընդունելու որ կովկասահայերը իրենց աչխարհազբական դիրքին բերումով , իրենց թռական առաւելութեան , նիւթական բարեկեցութեան . Եւ իմացական ու բարոյական զերազանցութեան շնորհիւ աւելի յարմարութիւններ ունին գործը զեկավարելու եւ արդէն տարիէ մը իվեր կղեկավարեն յաջող կերպով : Այսօր , ազգին այս օրհասական բոպէներուն մէջ իրաւասութեան խնդիր յարուցանել , կովկասահայութ Եւ թրքահայու հարց բարձրացնել ասիական մտածողութեան հետեւանք է Եւ կրնայ միայն ծառայել մեր արդէն համեստ ուժերը ջլատելու : Նման քայլեր կղառնան բոլորովին աններելի , երբ անոնք կառնեին համերաշխական դիմակին տակ :

Ամերիկահայութեան մեծամասնութեան մինչեւ հիմա ցոյց տւած ողջմտութիւնը իրաւոնք կուտայ մեզի ակնկալե-

լռւ որ ան պիտի ծառանայ այդ ազգակոր
ծան շարժումին դէմ իր հողիի բովանդակ
թափովը, որովհետեւ մենք ամէնս ալ
թրքահայ թէ կովկասահայ, պարսկահայ
թէ հնդկահայ, եղիպտահայ թէ ամերի-
կահայ՝ միևնոյն իտէալով տողորւած
տարազիր Եղրայրներ ենք, «որ մրրկաւ
ենք բաժնւած» :

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵ

Պօսթօն, Մէս. 1915





